



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

11.02.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022-07

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ
Համանման բողոք բերող՝ «Վերիտաս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Կ. Խաչունցի, Վ.
Վահանյանի,

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,
«Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Խաչատրյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,
լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ), քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից
18.01.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

«Վերիտաս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) կողմից 26.01.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ համանման բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու համապատասխան որոշում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Ընկերություն 1-ը, ներկայացրած համանման բողոքով, Բողոքներ քննող անձին խնդրել է չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 18.01.2022թ.-ին:

19.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022-07 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 26.01.2022թ.-ին:

27.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022-07 համարի ծածկագիրը:

01.02.2022թ.-ին, 03.02.2022թ.-ին և 11.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2022թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 18.01.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն «Լաբորատոր ազդանյութերի և պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2022 թ. հունվարի 13-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 73 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի լաբորատոր ազդանյութեր և պարագաներ (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի աղյուսակից հետո Պատվիրատուի կողմից գրված «Ծանոթություն»-ով պահանջվող բոլոր ապրանքների համար սահմանված են մի քանի լրացուցիչ պահանջներ, որոնցից թիվ 1-ում առկա է նաև Հրավերով պահանջվող բոլոր ապրանքներին վերաբերվող հետևյալ պահանջը՝

«Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» (կից փաստաթուղթ թիվ 3):

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» մրցույթով պահանջվող ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու և ՀՀ տարածքում վաճառելու համար ՀՀ Օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված նման պահանջ, ինչպես նաև այդ ապրանքների գրանցման համար սահմանված նորմեր առայժմ գոյություն չունեն, ինչը նշանակում է, որ Պատվիրատուի այդ պահանջը ոչ միայն չի համապատասխանում ՀՀ Օրենսդրությանը, այլև այդ պահանջը դառնում է խտրական, քանի որ սահմանափակում է տարբեր երկրների արտադրողների նմանատիպ ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին, դրանով իսկ արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

Պատվիրատուի կողմից ՀՀ Օրենսդրությանը և իրավական այլ ակտերին չհամապատասխանող այդ խտրական պահանջը նաև անհիմն կերպով բարդացնում է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնման գործընթացին՝ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Պատվիրատուի կողմից վերագրյալ պահանջի ներառումը հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական

հիմունքներով կազմակերպմանը <<Խաչապար>> ՍՊԸ-ի համար՝ դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:

<<Խաչապար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պարվիրապուտի՝ ՀՀ ՊՆ-ի <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2022թ. հունվարի 13-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Լաբորատոր ազդանյութերի և պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի աղյուսակից հետո Պարվիրապուտի կողմից ձեռք բերվող ապրանքների համար սահմանված՝ <<Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:>> պահանջը՝

ա) խտրական է և արգելք է հանդիսանում <<Խաչապար>> ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու իր օրենսդրական սկզբունքը՝ դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 7-րդ հոդվածի սահմանումներին;

բ) անհիմն կերպով բարդացնում է <<Խաչապար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ դրանով իսկ հակասելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին;

գ) հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը <<Խաչապար>> ՍՊԸ-ի համար՝

դրանով իսկ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին»:

Վերոգրյալի հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու համապատասխան որոշում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Ընկերությունը 01.02.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

««Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ի կողմից փարբեր տեսակի ապրանքների ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթներին մասնակցում է շուրջ 15 փարի, հաղթող է ճանաչվել մի շարք չափաբաժինների մասերով, եղել է բարեխիղճ մատակարար:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող՝ ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու, այս պահանջը ՀՀ ՊՆ-ի մրցույթներում առաջին անգամ հայտնվել է 2018 թ. դեկտեմբերի 7-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Հրավերի բոլոր չափաբաժիններում և 2018 թ. դեկտեմբերի 25-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում, որոնք՝ համապատասխանաբար, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել են 2018 թ. դեկտեմբերի 12-ին և 2019թ. հունվարի 8-ին, 2019թ. հունվարի 11-ին և փետրվարի 2-ին կայացվել են «ԳԲԽ-ԷՍ-2018/124» և «ԳԲՔԱ-ԱՄ-2019/01» իրավապարտադիր որոշումները, որոնցով բավարարվել են «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքները և պարտավորեցվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17» և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրերով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովներին՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասով՝ ընդունելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում, իսկ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասով՝ ընդունելու Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը փոփոխելու վերաբերյալ համապատասխան որոշում, այն է՝ այնտեղից հեռացնել «Ապրանքները պետք է ունենան. 1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): >> պահանջները:

ՀՀ ՊՆ-ի կողմից չեն բողոքարկվել այս երկու իրավապարտադիր որոշումները, ինչը նշանակում է, որ ՀՀ ՊՆ-ն ընդունում է ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձերի այն իրավական հիմնավորումները, որ այդ բողոքարկվող պահանջները Հրավերի տեխնիկական բնութագրերում սահմանելով, ՀՀ ՊՆ-ն խախտել է ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

ՀՀ ՊՆ-ն ընդամենը մի քանի ամիս է կատարել է այդ իրավապարտադիր որոշումների պահանջները, և մինչև 2020թ. օգոստոս ամիսը իր հայտարարած մրցույթների Հրավերներում չի սահմանել «ԳԲԽ-ԷՍ-2018/124» և «ԳԲՔԱ-ԱՄ-2019/01» իրավապարտադիր որոշումներով օրինախախտ համարված այդ պահանջը, սակայն արդեն 2020 թ. օգոստոսի 12-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35» ծածկագրով գնանշման հարցման Հրավերում ՀՀ ՊՆ-ն նորից է սահմանել այդ բողոքարկված՝ ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու պահանջը, որը «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է 2020 թ. օգոստոսի 12-ին, սակայն այս անգամ բողոքը մերժվել է 2020թ. օգոստոսի 27-ին կայացված «ԳԲՔԱ-ԼՕ-2020/78» որոշումով:

Այդ որոշումը «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է ՀՀ Դատարան, գործն այժմ գտնվում է դատաքննության ընթացքում:

Հարգելի պարոն Լ. Օհանյան:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող՝ ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու, այս պահանջը ՀՀ ՊՆ-ի մրցույթներում երրորդ անգամ հայտնվել է 2021 թ. հունիսի 7-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13» ծածկագրով գնանշման հարցման Հրավերում, որը 2021 թ. հունիսի 9-ին բողոքարկվել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, 2021թ. հունիսի 25-ին կայացվել է «ԳԲՔԱ-ԼՕ-2021/46» իրավապարտադիր որոշումը, որով ամբողջությամբ բավարարվել է «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը և պարտավորեցվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ ՊՆ-ի կողմից այս անգամ ևս չի բողոքարկվել այս իրավապարտադիր որոշումը, ինչը նշանակում է, որ ՀՀ ՊՆ-ն ընդունում է ՀՀ գնումների հետ կապված բողոքները «ԳԲՔԱ-ԼՕ-2021/46» որոշման քննող անձի այն իրավական հիմնավորումները, որ այդ բողոքարկվող պահանջը Հրավերի տեխնիկական բնութագրերում սահմանելը անհիմն է,

ինչով ՀՀ ՊՆ-ն խախտել է ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջները:

ՀՀ ՊՆ-ն ոչ միայն չի բողոքարկել «ԳԲՔԱ-ԼՕ-2021/46» իրավապարտադիր որոշումը, այլ անմիջապես կատարել է այն՝ շտապ կարգով չկայացած հայտարարելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13» ծածկագրով գնանշման ընթացակարգը, իսկ այդ ընթացակարգի Հրավերով պահանջվող ապրանքները ձեռք բերելու նպատակով 2021թ. հուլիսի 22-ին հայտարարել է նոր՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, որտեղ արդեն բացակայում էին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկված՝ ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու, այդ պահանջը (ի լրումն՝ կից փ/թ թիվ 1, էջեր՝ 1-2 և ի լրումն՝ կից փ/թ թիվ 2, էջեր՝ 1-2):

«Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23» ծածկագրով մրցույթին՝ թվով 34 չափաբաժիններից թվով 13 չափաբաժինների մասերով, որոնցից 3-ում ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած և հաղթող մասնակից, «Խաչպար» ՍՊԸ-ի կնքվել է ապրանքների մատակարարման թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/23-4» պայմանագիրը՝ ընդհանուր 217 300 (երկու հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, որն ամբողջությամբ կատարվել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից:

ՀՀ ՊՆ-ն ընդունել, օգտագործել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից մատակարարված այդ ապրանքները և ամբողջությամբ վճարել է դրանց արժեքը, ինչը փաստում և հաստատում է այն իրողությունը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ-ին մատակարարված ապրանքները, որոնք թեև չունեն ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23» ծածկագրով մրցույթի Հրավերով պահանջված՝ սակայն ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագրերը, այնուամենայնիվ հանդիսանում են որակյալ ապրանքներ, որոնք ամբողջությամբ բավարարել են ՀՀ ՊՆ-ի կարիքները:

Վերոգրյալ փաստերը աներկբա կերպով հաստատում և ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի կողմից փարբեր ապրանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված մրցույթների Հրավերներում սահմանված, սակայն ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագրեր ունենալու պահանջը օրինախախտ է, որի սահմանումը՝ համաձայն ՀՀ ՊՆ-ի կողմից չբողոքարկված «ԳԲԽ-ԷՄ-2018/124», «ԳԲՔԱ-ԱՄ-2019/01» և «ԳԲՔԱ-ԼՕ-2021/46» իրավապարտադիր որոշումների, որակվել է որպես ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Կարգի 22-րդ կետի պահանջների խախտումներ:

Հարգելի պարոն Լ. Օհանյան:

ՀՀ ՊՆ-ի կողմից գնումների գործընթացը ՀՀ-ում կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներով սահմանված և ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագրեր ունենալու այդ պահանջի սահմանման պատճառով անհիմն կերպով բարդացել է և անհնարին է դարձել ՀՀ ՊՆ-ի այդ մրցույթներին «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը, ՀՀ ՊՆ-ի կողմից այդ գնման գործընթացները կազմակերպվել են խտրական հիմունքներով, որի արդյունքում չեն ընդլայնվել հնարավոր մասնակիցների շրջանակները և չեն խրախուսվել նանց միջև մրցակցությունը, ՀՀ ՊՆ-ի կողմից այդ պահանջի սահմանման պատճառով հավասար պայմաններ չեն ապահովվել հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, ՀՀ ՊՆ-ի կողմից այդ պահանջի սահմանման պատճառով գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտներ են առաջացել մրցակցության համար, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, ինչի արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն չի կարողացել ՀՀ ՊՆ-ի կողմից այդ պահանջը ներառող մրցույթների մասերով իրականացնելու ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ Կոմիտեի դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

Ելնելով վերոգրյալներից՝ «Խաչպար» ՍՊԸ-ն պնդում է իր պահանջը, և խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին»:

Ընկերությունը 01.02.2022թ.-ին ներկայացված բողոքի մեկ այլ լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից «ԳԲՔԱ-ԼՕ-2022/07» բողոքը քննող անձին չի ներկայացվել գնումների գործընթացը ՀՀ-ում կարգավորող իրավական ակտերից որևէ մի փաստաթուղթ, որը կհիմնավորեր «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող այդ՝ «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջի առկայությունը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման Հրավերով պահանջվող ապրանքների համար գրանցման հավաստագիր ունենալու պահանջ ՀՀ Օրենսդրությամբ

նախատեսված և սահմանված չէ: Այդ մրցույթով պահանջվող ապրանքները << փարածք ներմուծելու և << փարածքում վաճառելու համար << Օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նման պահանջ սահմանված չէ, ինչպես նաև այդ ապրանքների գրանցման համար սահմանված նորմեր առայժմ գոյություն չունեն:

Պատվիրատուն իր այս պահանջի առկայությունը <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման Հրավերի մեջ <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/07>> բողոքում փորձում է հիմնավորել << <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով, ինչը ընդհանրապես կապ չունի բողոքի հետ, նախ՝ քանի որ այդ կետի սահմանումները վերաբերվում են գնման առարկայի բնութագրին, իսկ բողոքարկվող պահանջը ինչ-որ երկրներում ապրանքների գրանցման հավաստագիր ունենալուն է վերաբերվում:

Հարգելի պարոն Լ. Օհանյան:

2022թ. փետրվարի 2-ին կայացած <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/08>> բողոքի քննության ընթացքում <<Խաչպար>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից հարց փոփոխելով << ՊՆ-ի ներկայացուցիչներին, թե նրանք ինչով կբացատրեն բողոքարկվող <<Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում <<-ում արտադրված ապրանքները:>> պահանջի առկայությունը 2021թ. հունիսի 7-ի << ՊՆ-ի <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13>> ծածկագրով գնանշման Հրավերում (ի լրումն-2՝ կից փ/թ թիվ 1, էջեր՝ 1-3), որ մասին << ՊՆ-ի կողմից <<ԳԲՔԱ-ԼՕ-2021/46>> բողոքը քննող անձին ներկայացված դիրքորոշման մեջ այն որակվել է որպես <<տեխնիկական վրիպակի արդյունք>> (ի լրումն-2՝ կից փ/թ թիվ 2):

<< ՊՆ-ի ներկայացուցիչը պատասխանելով հարցին, բառացիորեն ասեց հետևյալը՝ <<...Նման՝ այդ ապրանքատեսակների համար նման պահանջ մենք չէինք նախատեսել կիրառել, որ վրիպակի արդյունքում է ներառվել հրավերի տեքստում....նկատելուց հետո, քանի որ բողոքարկված էր, չկարողացանք հրավերը փոփոխության ենթարկել....փոխալ պահանջը մենք չենք ուզում, և ինքը թյուրիմացաբար է ներառվել հրավերում:....>>, որի պատճառով էլ <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13>> ծածկագրով հրավերը հայտարարվել է չկայացած (ի լրումն-2՝ կից փ/թ թիվ 2), իսկ այդ ծածկագրով պահանջվող ապրանքների ձեռքբերման նպատակով 2021թ. հուլիսի 22-ին հայտարարվել է <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23>> ծածկագրով գնանշման Հրավերը, որտեղ արդեն առկա չի եղել <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից բողոքարկված պահանջը (ի լրումն-2՝ կից փ/թ թիվ 4, էջեր՝ 1-3):

<<Խաչպար>> ՍՊԸ-ի փնտրենը հայտարարեց, որ <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23>> ծածկագրով մրցույթով պահանջվող ապրանքատեսակների մի մասը պահանջվել են նաև 2020թ. օգոստոսի 12-ի <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35>> ծածկագրով գնանշման Հրավերում, որտեղ սակայն առկա է եղել այդ միևնույն՝ բողոքարկվող պահանջը (ի լրումն-2՝ կից փ/թ թիվ 5), իսկ այդ Հրավերի <<ԳԲԲԱ-ԼՕ-2020/78>> բողոքարկմանը ՀՀ ՊՆ-ի կողմից ներկայացված դիրքորոշումով ամեն կերպ արդարացվում և հիմնավորվում էր բողոքարկվող պահանջի կենսական անհրաժեշտությունը Հրավերի բոլոր ապրանքների համար, ինչն էլ հիմք հանդիսացավ բողոքի մերժման համար (ի լրումն-2՝ կից փ/թ թիվ 6, էջեր՝ 1-4):

ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու այս պահանջը հակասում է ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին, քանի որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար գնման գործընթացը կազմակերպվում է խտրական հիմունքներով, ինչն արգելք է <<Խաչպար>> ՍՊԸ-ի մասնակցությանը տվյալ մրցույթին, ինչի արդյունքում՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակը ընդայնվելու փոխարեն սեղվում է:

ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու այս պահանջը հակասում է ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի սահմանումներին, քանի որ անհիմն կերպով բարդացնում է <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ գնման գործընթացին, ինչի արդյունքում սահմանափակվում է մրցակցությունը:

ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու այս պահանջը հակասում է ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի սահմանումներին, քանի որ մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հանգեցնում է գնման գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար:

ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի սահմանումների խախտումներով <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման Հրավերում ներառված՝ ՀՀ Օրենսդրությամբ չնախատեսված գրանցման հավաստագիր ունենալու, այս պահանջը տվյալ դեպքում արգելք է հանդիսանում <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 7-րդ հոդվածի 1-ի մասի

պահանջով սահմանված ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը (ի լրումն-2՝ կից փ/թ թիվ 7, էջեր՝ 1-3):»:

Ընկերությունը 07.02.2022թ.-ին ներկայացված բողոքի մեկ այլ լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«1) Տեղեկացնում եմ Ձեզ, որ այս բողոքով քննվող <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով մրցույթում, ինչպես նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից բողոքարկված և ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձանց վարույթներում գտնվող բողոքներով քննվող <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>>, <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>>, <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22-9/10>>, <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22-9/11>>, <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22-9/12>> և <<<< ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-22-9/13>> ծածկագրով մրցույթները հայտարարվել են միևնույն՝ <<<<Լաբորատոր ազդանյութերի և պարագաների>> ձեռքբերման նպատակով, որի պատճառով փաստացի միևնույնն են ինչպես <<Խաչպար>> ՍՊԸ-ի բողոքների հիմնավորումները, պահանջները, ՀՀ ՊՆ-ի կողմից ներկայացված դիրքորոշումները, այնպես էլ այդ բողոքների քննությունների նիստերում Բողոքաբերի և Պատվիրատուի ներկայացված փաստարկները, որոնք միմյանցից փարբերվում են միայն այդ մրցույթների և դրանց բողոքների ծածկագրերի փոփոխությամբ, և որոնք վերաբերվում են ինչպես քննվող կոնկրետ բողոքին, այնպես էլ մնացած բոլոր՝ <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/07>>, <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/08>>, <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/09>>, <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/07>>, <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/12>> և <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/13>> ծածկագրերով բողոքներին:

2) Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ն օգտվելով բողոքի քննության ընթացքում իր բողոքի հիմնավորումների և պահանջների մեջ փոփոխություններ , լրացումներ ու պակասեցումներ կատարելու իրավունքից, փոփոխության է ենթարկում բողոքի հիմնավորման համար ներկայացված իր հիմնավորումներից մի քանիսը, և խնդրում է Ձեզ՝ բողոքի քննության ընթացքում չանդրադառնալ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքում արված այն հղումներին, որոնք վերաբերվում են Պատվիրատուի կողմից ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սկզբունքների և սահմանումների խախտումներին:

3) Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ն օգտվելով բողոքի քննության ընթացքում իր բողոքի հիմնավորումների և պահանջների մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու իրավունքից, խնդրում է Ձեզ՝ բողոքի քննության համար որպես

հիմնավորումներ ընդունել Պատվիրատուի կողմից գնումների գործընթացները ՀՀ-ում կարգավորող հետևյալ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումները՝

ա) Համաձայն ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի՝

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

բ) Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոմամբ հաստատված Կարգի 22-րդ կետի՝

22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

4) Լրացուցիչ տեղեկացնում եմ Ձեզ, որ 2022թ. փետրվարի 2-ին կայացած «ԳԲՔԱ-ԼՕ-2022/08» բողոքի քննության ընթացքում «Խաչապար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից հարց տրվեց ՀՀ ՊՆ-ի ներկայացուցիչներին, թե նրանք ինչով կբացատրեն բողոքարկվող «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» պահանջի առկայությունը 2021թ. հունիսի 7-ի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13» ծածկագրով գնանշման Հրավերում (ի լրումն-3՝ կից փ/թ թիվ 1, էջեր՝ 1-2, արված նշումները), որ մասին ՀՀ ՊՆ-ի կողմից «ԳԲՔԱ-ԼՕ-2021/46» բողոքը քննող անձին ներկայացված դիրքորոշման մեջ այն որակվել է որպես «ստիպանդակալի արդյունք» (ի լրումն-3՝ կից փ/թ թիվ 2, արված նշումները):

ՀՀ ՊՆ-ի ներկայացուցիչը պատասխանելով այդ հարցին, բառացիորեն ասեց հետևյալը (մեջբերում տեսաձայնագրությունից)՝ «...Նման՝ այդ ապրանքատեսակների համար նման պահանջ մենք չէինք նախատեսել կիրառել, որ վրիպակի արդյունքում է ներառվել հրավերի տեքստում....նկատելուց հետո, քանի որ բողոքարկված էր, չկարողացանք հրավերը փոփոխության ենթարկել....տվյալ պահանջը մենք չենք ուզում, և ինքը թյուրիմացաբար է ներառվել հրավերում:....>>, որի պատճառով էլ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/13» ծածկագրով հրավերը ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարվել է չկայացած (ի

լրումն-3՝ կից փ/թ թիվ 3, արված նշումները), իսկ այդ ծածկագրով պահանջվող ապրանքների ձեռքբերման նպատակով 2021թ. հուլիսի 22-ին հայտարարվել է ««ՂՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23»» ծածկագրով գնանշման Հրավերը, որտեղ արդեն առկա չի եղել ««Խաչպար»» ՍՊԸ-ի կողմից բողոքարկված այդ պահանջը (ի լրումն-3՝ կից փ/թ թիվ 4, էջեր՝ 1-2, արված նշումները):

««Խաչպար»» ՍՊԸ-ի տնօրենը հայտարարեց, որ ««ՂՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/23»» ծածկագրով մրցույթով պահանջվող ապրանքատեսակների մի մասը պահանջվել են նաև 2020թ. օգոստոսի 12-ի ««ՂՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35»» ծածկագրով գնանշման Հրավերում, որտեղ սակայն առկա է եղել այդ միևնույն՝ բողոքարկվող պահանջը (ի լրումն-3՝ կից փ/թ թիվ 5, էջեր՝ 1-2, արված նշումները), իսկ այդ Հրավերի ««ԳԲՔԱ-ԼՕ-2020/78»» բողոքարկմանը ՀՀ ՊՆ-ի կողմից ներկայացված դիրքորոշումով, ինչպես նաև ՊՆ-ի ներկայացուցիչ Վահանյանի փաստարկներով՝ ամեն կերպ արդարացվում և հիմնավորվում էր բողոքարկվող պահանջի կենսական անհրաժեշտությունը Հրավերի բոլոր ապրանքների համար, ինչն էլ հիմք հանդիսացավ բողոքի մերժման համար (ի լրումն-3՝ կից փ/թ թիվ 6, էջեր՝ 1-4):

5) Լրացուցիչ տեղեկացնում եմ Ձեզ, որ 2022թ. փետրվարի 3-ին կայացած ««ԳԲՔԱ-ԼՕ-2022/07»» բողոքի քննության ընթացքում ՀՀ ՊՆ-ի ներկայացուցիչ Վ. Վահանյանի կողմից արվեցին հետևյալ հայտարարությունները՝

ա) (մեջբերում տեսաձայնագրությունից)՝ ««...պարոն Բալասանյանը միշտ ներկրել է ախտահանիչ նյութեր և որոշ բժշկական պարագաներ... .. մինչ այսօր, մինչ էս վերջին դեպքերը էս դրույքի դեպքում, երբևիցե չի ներկայացրել հայտ լաբորատոր ազդանյութերի մատակարարման»»:

Այս հայտարարությունը ոչ մի կապ չունի մեր բողոքի հետ, հակահրավակյան է, ուստի կարող ենք չանդրադառնալ դրան, սակայն պատասխանում եմ, որ պարոն Բալասանյանը ներկրել և ներկրում է շատ ավելի շատ նյութեր և բժշկական պարագաներ, քան թե ենթադրում է պարոն Վահանյանը, իսկ լաբորատոր ազդանյութերի մրցույթներին նախորդ տարիներին չի մասնակցել՝ ցանկություն չունենալու պատճառով, այս տարի մասնակցելու համար ունեցել է ցանկություն, սակայն մեր կողմից բողոքարկվող այս հակաօրինական պահանջը արգելք է հանդիսանում և հնարավորություն չի ընձեռնում ««Խաչպար»» ՍՊԸ-ին՝ մասնակցելու լաբորատոր ազդանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթներին:

բ) (մեջբերում տեսաձայնագրությունից)' <<...ըստ իմ ունեցած տեղեկությունների, <<Խաչպար>> ՍՊԸ-ն չի հանդիսանում լաբորատոր այս մեր մրցույթի առարկա հանդիսացող լաբորատոր ազդանյութերի ներկրող,.... >> Այս հայտարարությունը ևս ոչ մի կապ չունի մեր բողոքի հետ, հակահրավական է, ուստի կարող ենք չանդրադառնալ դրան, սակայն պատասխանում եմ, որ պարոն Վահանյանի ունեցած տեղեկությունները սխալ են, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ն իբրև թե չի հանդիսանում է նաև լաբորատոր ազդանյութերի ներկրող, որի ապացուցման համար թեև իրավունք ունեմ ոչինչ էլ չներկայացնելու, սակայն մերկախոս չհամարվելու համար ներկայացնում եմ 25.09.2021թ. Արևմտյան Մաքսատուն-Վարչության> կողմից տրված թիվ 05100011/250921/0033255 Ապրանքների հայտարարագիրը (ի լրումն-3, կից փ/թ թիվ 7, արված նշումները), որը փաստում և հաստատում է, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից << տարածք է ներմուծվել Սինգապուրի PERKINELMER SINGAPORE PTE LTD ֆիրմայի արտադրության <<Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով, պատրաստի ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով կամ առանց տակդիրի՝ բացի 3002 կամ 3006 ապրանքային նդիրքում նշված ապրանքներից, հավաստագրված չափանմուշային նյութեր, ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՆՅՈՒԹ (SARS-COV-2 ՏԵՍ ԼՐԱՑ.>> լաբորատոր ազդանյութերը:

գ) (մեջբերում տեսաձայնագրությունից)'<<... Ցուցաբերում են իրավունքի չարաշահում, ինչը, ինչը իրենց իրավունքի չարաշահումը տեղի է ունենում իրենց իրավունքի սուբյեկտիվ իրացման ընթացքում, դա արգելվում ա, իրավունքի չարաշահումը արգելված ա քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով.....>> հայտարարությունը ևս ոչ մի կապ չունի մեր բողոքի հետ, հակահրավական է, ուստի կարող ենք չանդրադառնալ դրան, սակայն պատասխանում եմ, որ պարոն Վահանյանի նախորդ և այս հայտարարությունները մենք համարում ենք որպես պարոն Վահանյանի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանք և զրպարություն՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի տնօրեն Սմբատ Բալասանյանի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նկատմամբ, և պահանջում ենք, որպեսզի պարոն Վահանյանը հերքի իր արած հայտարարությունները, և ներողություն խնդրի Սմբատ Բալասանյանից, այլապես՝ ղեկավարվելով << <<Քաղաքացիական օրենսգրքի>> թիվ 19-րդ հոդվածով, կնախաձեռնենք համապատասխան իրավական գործընթաց:

դ) (մեջբերում տեսաձայնագրությունից)'<<... իրենց սուբյեկտիվ իրավունքի պահպանման համար կատարած այս իրավունքի պահպանումը իրավունքի չարաշահմամբ իրականացվելու դեպքում, արդյունքում կաթվածահար է արվում, նպատակ ա դրվել

կաթվածահար անել ռազմաթշկական վարչության գործունեությունը, ,.... առաջացրել է շուրջ 100000 ավել մեր շահառուների իրավունքների ուրնահարում.... >> հայտարարությունը ևս ոչ մի կապ չունի մեր բողոքի հետ, հակահրավական է, ուստի կարող ենք չանդրադառնալ դրան, սակայն ՀՀ ՊՆ-ի ՌԲՎ շուրջ 100 000-ից ավել շահառուների նկատմամբ ունեցած հարգանքից ելնելով՝ տեղեկացնում եմ, որ նախորդ տարիներին ՀՀ ՊՆ-ի կողմից ախտահանիչ նյութերի ձեռքբերման համար հայտարարված մրցույթների ապրանքների տեխնիկական բնութագրերի երկարամյա բողոքարկումներից հետո այնտեղից միայն 1 ապրանքատեսակի մասով հեռացվեցին մի քանի պահանջներ՝ այդ թվում նաև «Խաչպար»-ի կողմից այսօր բողոքարկվող համանման հակաօրինական պահանջը, ինչի արդյունքում՝ միայն այդ 1 ապրանքատեսակի մասով, որը հանդիսանում է հաբերի տեսքով դյուրալուծ քլոր պարունակող ապրանքը, մինչև 2019թ. այդ ապրանքի 400 000 /չորս հարյուր հազար/ հատի հաբի համար ՀՀ ՊՆ-ն հաղթող ճանաչված «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին վճարել է 30 576 000 /երեսուն միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար/ ՀՀ դրամ(ի լրումն-3, կից փ/թ թիվ 8, արված նշումները), իսկ 2019թ. այդ նույն ապրանքի 400 000 /չորս հարյուր հազար/ հատի հաբի համար ՀՀ ՊՆ-ն հաղթող ճանաչված «Խաչպար» ՍՊԸ-ին վճարել է ընդամենը 2 520 000/երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ (ի լրումն-3, կից փ/թ թիվ 9, արված նշումները), այսինքն՝ ՀՀ ՀՀ ՊՆ-ի ՌԲՎ շուրջ 100000-ից ավել շահառուների համար ֆինանսական տնտեսումը կազմել է 28 056 000 /քսանութ միլիոն հիսունվեց հազար/ ՀՀ դրամ՝ միայն այդ մեկ ապրանքի մասով:

ՀՀ ՊՆ-ի ՌԲՎ շուրջ 100 000-ից ավել շահառուներին տրամադրում եմ ՀՀ ՊՆ-ի տարբեր մրցույթների մասին տեղեկատվություններ, որոնց վերլուծությունից իրենց համար պարզ կլինի թե ով կամ ովքեր են կաթվածահար անում ՀՀ ՊՆ-ի ՌԲՎ-ի աշխատանքները, և թե ով կամ ովքեր են ուրնահարում ՌԲՎ շուրջ 100 000-ից ավել շահառուների իրավունքները՝

- ՀՀ ՊՆ-ի համար խիստ անհրաժեշտ և կենսական կարևորագույն ապրանք հանդիսացող «Նշտարի սայր տարբեր չափսերի» անվանումով ապրանքից 11000 հատի ձեռքբերման համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35» ծածկագրով մրցույթը ամփոփվել է 2020թ. սեպտեմբերի 1-ին, արձանագրվել է, որ մրցույթի 12 մասնակիցներից և ոչ մեկը այդ ապրանքի մասով թիվ 6-րդ չափաբաժնի համար գնային առաջարկ չի ներկայացրել (ի լրումն-3, կից փ/թ թիվ 10, արված նշումները), սակայն դրանից հետո հրապարակ նոր մրցույթ չի հայտարարվել մինչև 2020թ. պատերազմի սկիզբը՝ սեպտեմբերի

27-ը: Այդ <<Նշտարի սայր փարբեր չափսերի>> անվանումով ապրանքից 192000 հատ <<ՊՆ-ին և Արցախի Բանակին նվիրատվության կարգով փրամադրվել է <<Խաչապար>> ՍՊԸ-ի կողմից պատերազմը սկսվելու օրվանից՝ սեպտեմբերի 27-ից սկսած:

- << ՊՆ-ի համար անհրաժեշտ և կենսական կարևորագույն ապրանք հանդիսացող ախտահանիչ նյութերի, այդ թվում նաև՝ <<Վիրահատական դաշտի (մաշկի) ախտահանման հեղուկ>> անվանումով ապրանքից 180 լիտրի ձեռքբերման համար 2021թ. հոկտեմբերի 4-ին հայտարարված <<<< ՊՆ-ԳՀԱՊԶԲ-21-9/41>> ծածկագրով մրցույթի գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել (ի լրումն-3, կից փ/թ թիվ 11, էջեր՝ 1-2, արված նշումները), սակայն մինչ օրս այդ <<Վիրահատական դաշտի (մաշկի) ախտահանման հեղուկ>> ապրանքի ձեռքբերման համար նոր մրցույթ չի հայտարարվել:

- 2022թ. հունվարին << ՊՆ-ի կարիքների համար <<լաբորատոր ազդանյութերի և պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարված թվով 5 փարբեր ծածկագրերով մրցույթներից մեկում ընդհանրապես մասնակից չի եղել, իսկ այդ մրցույթների Հրավերներով պահանջված՝ ընդհանուր թվով 310 անվանումով ապրանքների չափաբաժինների մասերով, գնային առաջարկներ ընդհանրապես չեն եղել թվով 123 չափաբաժինների մասերով (39,7 %), միայն մեկական առաջարկներ եղել են թվով 186 չափաբաժինների մասերով (60 %), իսկ 2 և ավելի առաջարկներ եղել է ընդամենը միայն 1 չափաբաժնի մասով (0,3 %) (ի լրումն-3, կից փ/թ թիվ 12, արված նշումները):

Հարգելի պարոն Լ. Օհանյան:

<<Խաչապար>> ՍՊԸ-ն չի մասնակցել 2022թ. այդ մրցույթներին, քանի որ այդ մրցույթների Հրավերների <<Տեխնիկական բնութագիր>> Հավելված 1-ով Պատվիրատուի կողմից սահմանված <<Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլն): Բացառություն են կազմում <<-ում արտադրված ապրանքները:>> պահանջը վերաբերվում է Հրավերով պահանջվող բոլոր ապրանքների գնման բնութագրերին, այն դեպքում, երբ ապրանքները << փարածք ներմուծելու և << փարածքում դրանց վաճառքը իրականացնելու համար << Օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նման պահանջ սահմանված չէ, ինչպես նաև այդ ապրանքների գրանցման համար սահմանված նորմեր առայժմ դեռևս գոյություն չունեն: Պատվիրատուի կողմից <<ԳԲՔԱ-ԼՕ-2022/07>> բողոքը քննող անձին այդպես էլ չի ներկայացվել գնումների գործընթացը <<-ում կարգավորող իրավական ակտերից որևէիցե մի փաստաթուղթ, որը կհիմնավորեր <<Խաչապար>> ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող այդ պահանջի սահմանումը Հրավերի Հավելված 1-ում:

Բողոքարկվող պահանջը այդ մրցույթներին <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցության համար հավասար պայմաններ չի ապահովում, հանգեցնում է այդ գնումների գործընթացներում <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, քանի որ նման ձևով գնման առարկաների բնութագրերը սահմանելիս հաշվի չեն առնվել, որ դրանք չեն բավարարի բազմաթիվ երկրների բոլոր այն հնարավոր արտադրողներին և նրանց արտադրանքը << փարածք ներմուծող և այդ մրցույթների հնարավոր մասնակիցը համարվող <<Խաչպար>> ՍՊԸ-ին՝ որն այդ մրցույթներին կարող է առաջարկել << Օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով չսահմանված և չպահանջվող այդ գրանցման հավաստագրերը չունեցող այդ ապրանքատեսակները:

Ելնելով վերոգրյալներից՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ն պնդում է իր պահանջը, և խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> << Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի << ՊՆ-ի <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:»:

3. «Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վերիտաս» ՍՊԸ-ն 26.01.2022թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «<< պաշտպանության նախարարություն»-ը լաբորատոր ազդանյութերի և պարագաների գնման նպատակով 2022թ. հունվարի 12-ին հրապարակել է <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

<<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից մասնավորապես դրվել են հետևյալ պահանջները

- Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում <<-ում արտադրված ապրանքները,

- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

Վերոնշյալ պահանջներից առաջինը սահմանափակում է մի շարք արտադրողների, կազմակերպությունների մասնակցությունը տվյալ ընթացակարգին, քանի որ օրինակ Շվեյցարիայում, Հարավային Կորեայում կամ Կանադայում գրանցված ապրանքներ ունեցող ոչ մի ընկերություն չի կարող մասնակցել տվյալ ընթացակարգին զուտ Պատվիրատուի կողմից կամայական չափանիշներով երկրները ֆիլտրելու անհիմն պահանջի հետևանքով:

Վերոնշյալ պահանջներից երկրորդը հանդիսանում է անհիմն և անիրագործելի: Որևէ ընկերություն, որևէ մտավարար չի կարող ներկայացնել արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության հավաստագիր:

2.1 <<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից սահմանված <<Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում <<-ում արտադրված ապրանքները>> պահանջը խտրական է և ոչ իրավաչափ, քանի որ խախտվում է գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքը:

Գնումների մասին << օրենքի Հոդված 3-ի 2 կետի 3) ենթակետում գրված է <<2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:>>»

Նույն օրենքի Հոդված 7-ի 1 կետում գրված է <<Հոդված 7. Գնումներին մասնակցելու հավասարությունը.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:>>:

Փաստացի, մի շարք բարձր վարկանիշ ունեցող երկրներում գրանցված ապրանքների արտադրողներ, <<-ում դրանց ներկայացուցիչ հանդիսացող կազմակերպություններ ի սկզբանե զրկված են այս ընթացակարգին մասնակցելու իրավունքից: Անհասկանալի է, թե պատվիրատուն որ նորմատիվ ակտով է առաջնորդվել և սահմանել ֆիլտր, այսպես կոչված ընդունելի երկրների ցանկ:

Ստացվում է, որ ցանկացած պատվիրատու այսուհետ կարող է ինքնուրույն, կամայական կերպով որոշել, որ օրինակ իր կարիքների բավարարման համար գնվելիք

ապրանքները պետք է գրանցված լինեն հենց Գերմանիայում, մեկ ուրիշ պատվիրատու էլ կցանկանա, որ իրեն մատակարարվելիք ապրանքները գրանցված լինեն Աֆրիկայում և այսպես շարունակ: Անթույլատրելի է սահմանափակել կազմակերպությունների մասնակցությունը ըստ դրանց կողմից ներկայացվող ապրանքների գրանցման երկրի:

2.2 <<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից սահմանված "արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)" կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր" պահանջը իրավաչափ չէ, քանի որ այն անիրագործելի է, մասնավորապես որևէ ընկերություն չի կարող ներկայացնել այդպիսի փաստաթուղթ: Տրամաբանական հարց է ծագում, թե այդ դեպքում պատվիրատուն ինչպես է իրականացնելու ապրանքների ընդունումը: Պատասխանը հետևյալն է, իր համար ցանկալի մատակարարներից ապրանքը ընդունում է առանց խոչընդոտի, իսկ իր համար անցանկալի մատակարարներին ստիպում է ներկայացնել գոյություն չունեցող փաստաթուղթ:

Մեր ընկերությունը պնդում է, որ որևէ ընկերություն չի կարող ներկայացնել արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)" կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության հավաստագիր:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Վերիտաս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է չկայացած հայտարարել «<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Ընկերություն 1-ը, 03.02.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հավելել է հետևյալը.

«Պատվիրատուն իր առարկություններում նշում է, որ <<- Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում <<-ում արտադրված ապրանքները>> պահանջը սահմանվել է ելնելով ՊՆ կարիքներից և այդ պահանջի նպատակը որակյալ ապրանքներ ձեռք բերելն է:

Սրացվում է, որ պատվիրատուն համարում է, որ ինքն իրավունք ունի ընտրել, թե որ երկրներում կամ միություններում գրանցված ապրանքներն են իր համար ընդունելի և հղում է անում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի Հոդված 13-ի 3 կետին, մինչդեռ այդպիսի հղում կատարելը իրավաչափ չէ, քանի որ մեջբերված կետը հնարավորություն է տալիս պատվիրատուին մանրամասն նկարագրել այն ապրանքը, որը համարժեք է իր կարիքին: Այսինքն պատվիրատուն կարող է մանրամասն նկարագրել յուրաքանչյուր չափաբաժնով

պահանջվող ապրանքների բնութագրերը, սակայն պատվիրատուն ԿՎԿԼ ընթացակարգում չի շարժվել այդ տրամաբանությամբ, այլ հակառակը, սահմանել է երկրների ցանկ, որտեղ գրանցված ապրանքները ընդունելի են իր համար: Նույն տրամաբանությամբ, մեկ այլ պատվիրատու էլ կսահմանի այլ երկրների ցանկ, որն իր համար է ընդունելի և կպատճառաբանի որ այդ երկրների ապրանքներն է իր համար ընդունելի՝ նշելով որ իր կարիքը կարող է բավարարվել միայն այդ երկրներում գրանցված ապրանքներով: Այստեղ հարց է ծագում, ո՞րն է ՊՆ և մյուս պատվիրատուների փարբերությունը, ինչու պետք է ՊՆ-ն իրավունք ունենա սահմանելու երկրների միությունների ցանկ, իսկ մեկ այլ պատվիրատու չի կարող: Եթե փարբերությունը երկրների քանակի մեջ է, այսինքն ըստ ՊՆ-ի առարկությունների իր սահմանած երկրների քանակը 40 է (իրականում 33) և դա լայն մրցակցության հնարավորություն է փայլա, ապա մեկ այլ պատվիրատու էլ ընտրողաբար կսահմանի օրինակ 35 երկրների ցանկ: Բացի այդ, պատվիրատուի նկարագրած դեպքերը, օրինակ Շվեյցարիայից դեպի ԵՄ ապրանք արտահանելիս առկա ընթացակարգերի մասին, տեղին չեն, քանի որ մենք այստեղ չենք քննարկում թե ինչպես է Շվեյցարիայում գրանցված ապրանքը մուտք գործելու ԵՄ: Այս բողոքի քննության փաստաթղթերից, բացարձակապես կարևոր չէ, թե ինչ ընթացակարգով է կատարվում Շվեյցարիայից ապրանքների արտահանումը դեպի ԵՄ, քանի որ ՀՀ-ն չի հանդիսանում ԵՄ անդամ, հետևաբար նաև ԵՄ դիրեկտիվներին հետևելու պարտավորություն ՀՀ-ն չունի: ՊՆ-ի կողմից բերված օրինակները այն մասին, թե ինչպես է արտահանվում ապրանքը Շվեյցարիայից դեպի ԵՄ, բացարձակապես կիրառելի չեն ՀՀ համար, քանի որ ԵՄ երկրներում ապրանքների շրջանառության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն ՀՀ ապրանք ներմուծելու համար:

Բացի այդ, ՊՆ-ն իր վերոնշյալ պահանջի հիմքում դնում է իբր որակյալ ապրանք գնելու անհրաժեշտությունը, սակայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ կողմից ստացված գրության համաձայն, մեջբերում եմ «CE սերտիֆիկատը հավաստում է Եվրոպական Միության դիրեկտիվներին համապատասխանության և այդ երկրներում ապրանքի շրջանառության թույլտվությունը և չի երաշխավորում ապրանքի որակը»: Այստեղից հետևում է, որ ՊՆ պնդումները այն մասին, որ վերոնշյալ դրույթի նպատակը, որակյալ ապրանքներ ձեռք բերելն է, անհիմն է և չի համապատասխանում իրականությանը: Որակյալ ապրանքներ ձեռք բերելու համար ընդամենը պետք էր գրագեղ կերպով կազմել փեխնիկական բնութագիր յուրաքանչյուր չափաբաժնի համար, դրանց մեջ ներառել

այնպիսի պահանջներ, որոնց կարող էին բավարարել միայն որակյալ ապրանքները, մինչդեռ ՊՆ-ն դա չի կատարել և կամայական կերպով որոշել է որ ԵՄ կամ ԵԱՏՄ կամ ԱՄՆ կամ Ճապոնիայում գրանցված ապրանքերն են միայն որակյալ և ընդունելի իր համար:

Այժմ անդրադառնանք ՊՆ հաջորդ առարկությանը:

ՊՆ-ն պնդում է, որ <<- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)' կողմից փվյալ ապրանքի համար փրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր>> պահանջը իրավաչափ է և բխում է 2017թ. մայիսի 4-ի ՀՀ կառավարության 526-Ն որոշման 21-րդ կետի 1 ենթակետի ա) պարբերությունից>>:

ՊՆ-ի այս պնդումը չի համապատասխանում իրականությանը: Դրա մեջ համոզվելու համար բավական է համեմատել այս ընթացակարգի հրավերի պահանջը և <<Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 21 կետի 1) ենթակետի ա. բաժնում 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշմամբ իրականացված փոփոխության մեջ գրվածը:

Համեմատությունից հետո պարզ է դառնում, որ առկա են հետևյալ անհամապատասխանությունները

1. Որակի հավաստագիր:

Այսպիսի փերմին, բառակապակցություն կամ պահանջ սահմանված չէ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 21 կետի 1) ենթակետի ա. բաժնում 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշմամբ իրականացված փոփոխության մեջ: Հարց է ծագում, թե այդ դեպքում ինչպես է ՀՀ պաշտպանության նախարարությունը բխեցրել մի դրույթ ՀՀ կառավարության որոշումից, որտեղ այդպիսի բան չկա գրված:

2. Արտադրող կազմակերպության կողմից փվյալ ապրանքի համար փրված համապատասխանության հավաստագիր:

Այստեղ ևս առկա է հակասություն, քանի որ նախ արտադրող կազմակերպության կողմից չի կարող փրվել փվյալ ապրանքի համապատասխանության հավաստագիր, ինչն արդեն մեր կողմից ապացուցվել է հղում անելով ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ 2012թ փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն ՀՀ օրենքին, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշման մեջ այլ կերպ է շարադրված <<Ապրանքն արտադրողից համապատասխանության

սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը>>: Ինչպես նկատելի է, ՀՀ կառավարության որոշման գրված չէ, որ համապատասխանության սերտիֆիկատը պետք է տրված լինի ապրանքն արտադրողից, մինչդեռ ՀՀ ՊՆ-ն պահանջում է հենց արտադրող կազմակերպության կողմից տրված հավաստագիր:

3. Հավաստագիր:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պահանջում է հավաստագիր, սակայն ՀՀ կառավարության որոշման մեջ գրված է սերտիֆիկատ: Ոլորտին քիչ թե շատ տեղյակ անձինք կփաստեն, որ հավաստագիր և սերտիֆիկատ տերմինները նույնն են, նույն իմաստն ունեն, սակայն քանի որ տվյալ դեպքում առկա է խիստ բարձր ռիսկ, որ ՀՀ ՊՆ ներկայացուցիչները ապրանքի ընդունման ժամանակ հերթական անգամ կարող են երկակի մեկնաբանել այդ տերմինը ի վնաս մատակարարի և չընդունել ապրանքը, ապա անհրաժեշտություն է առաջանում օգտագործել հենց «սերտիֆիկատ» տերմինը:

Այժմ անդրադառնանք ՀՀ ՊՆ կողմից ուղարկված առարկություններում թվարկված այն տարօրինակ փաստաթղթերի անվանումներին, որոնք ըստ ՊՆ-ի ընդունելի են իրենց համար: Այդ փաստաթղթերի անվանումները հետևյալն են՝ «որակի հավաստագիր», «որակի հայտարարագիր», «փորձաքննության հավաստագիր»:

Կարդալով այս տարօրինակ անվանումներով փաստաթղթերի անվանումները, տպավորություն է ստեղծվում, որ ՀՀ պաշտպանության նախարարության այն աշխատակիցները, ովքեր կազմել են այդ տեքստը, միտումնավոր կերպով կրկին օգտագործում են այնպիսի տերմիններ, որոնք սահմանված չեն ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ 2012թ փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն ՀՀ օրենքով: Սրա նպատակն այն է, որ ապրանքի մատակարարման ժամանակ իրենք կամայական կերպով և իրենց նախասիրությամբ որոշեն, թե օրինակ մատակարարի ներկայացրած փաստաթուղթը արդյոք համապատասխանում է իրենց կողմից մատնանշված փաստաթղթերի անվանումներին, թե ոչ: Այլ կերպ ասած, որոշակի մանկրելու տեղ են թողնում իրենց համար այս քայլով, ինչն անթույլատրելի է մեր համար:

Եթե պարզիրատուի իրական նպատակը լիներ ստանալ մատակարարից փաստաթուղթ, որը կհավաստեր տվյալ ապրանքի համապատասխանությունը սահմանված պահանջներին, ապա պարզիրատուն կօգտվեր ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ 2012թ փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն ՀՀ օրենքի 27 հոդվածի 3 կետում առկա ձևակերպումներից և տերմիններից, մասնավորապես պետք է օգտագործեր նշված օրենքում կիրառված փաստաթղթերի կոնկրետ անվանումներ, ինչպիսիք են

համապատասխանության հայտարարագիրը, համապատասխանության սերտիֆիկատը, փորձարկման արձանագրությունը, սակայն ինչպես տեսնում ենք պատվիրատուն միտումնավոր չի ցանկանում օգտագործել տվյալ օրենքով սահմանված ձևակերպումները, մինչդեռ այդ օրենքը տարածվում է նաև ՀՀ պաշտպանության նախարարության վրա (տես ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ 2012թ փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն ՀՀ օրենքի Հոդված 1, կետ 3-ը՝ «Սույն օրենքը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների վրա:»):

Վերոգրյալ վերլուծությունների արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ պատվիրատուն պետք է իր պահանջներում առկա ձևակերպումները և փաստաթղթերի անվանումները ամբողջությամբ համապատասխանեցնի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ 2012թ փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն ՀՀ օրենքին և ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմանը, և շարադրի իր պահանջը հետևյալ կերպ.

«Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության հայտարարագիր կամ հավաստագրող մարմնի կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատ կամ փորձարկման արձանագրություն:»):

Բողոքը պնդում ենք ամբողջությամբ:»:

Ընկերություն 1-ը, 03.02.2021թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հավելել է հետևյալը.

«Ի լրումն Վերիտաս ՍՊԸ կողմից ներկայացված բողոքի, հայտնում եմ հետևյալը.

«ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ ՀՀ կողմից ստորագրված Հ Ա Մ Ա Զ Ա Յ Ն Ա Գ Ր Ի առաջին էջի երրորդ պարբերությունում գրված է, մեջբերում եմ

«ընդունելով, որ պետական գնումներին առնչվող օրենքները, կանոնակարգերը, ընթացակարգերը և գործելակերպերը չպետք է մշակվեն, ընդունվեն կամ կիրառվեն օտարերկրյա կամ տեղական արտադրանքների ու ծառայությունների և օտարերկրյա կամ տեղական մատակարարների նկատմամբ այնպես, որ տեղական արտադրանքներին կամ ծառայություններին կամ տեղական մատակարարներին պաշտպանություն տրվի, և դրանք չպետք է խտրականություն դնեն օտարերկրյա արտադրանքների և ծառայությունների կամ օտարերկրյա մատակարարների միջև,» մեջբերման ավարտ:

Փաստացի պատվիրատուն խտրականություն է դրսևորում օտարերկրյա մատակարարների միջև, քանի որ այդ ընթացակարգին կարող են մասնակցել միայն այն երկրներում գրանցված ապրանքների արտադրողները, որոնք նշել է պատվիրատուն, դրանք են ԵԱՏՄ երկրները, ԱՄՆ և Ճապոնիան:

<<ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ << կողմից ստորագրված < Ա Մ Ա Ձ Ա Յ ՆԱ Գ Ր Ի <ողված VI Տեխնիկական բնութագրեր (մասնագրեր) առաջին կետի համաձայն, մեջբերում եմ.

<<1. Գնվելիք արտադրանքի և ծառայությունների բնութագրերը, ինչպիսիք են որակը, արտադրողականությունը, անվտանգությունն ու չափերը, խորհրդանիշները, տրամադրվածությունը, փաթեթավորումը, գունավորումը և պիտակավորումը, կամ դրանց արտադրության մեթոդներն ու գործընթացները և համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող պահանջները սահմանող տեխնիկական մասնագրերը, որոնք սահմանվում են գնող սուբյեկտների կողմից, չպետք է մշակվեն, ընդունվեն կամ կիրառվեն՝ նպատակ հետապնդելով ստեղծել կամ արդյունքում հանգեցնել միջազգային առևտրի համար անհարկի խոչընդոտների: >> մեջբերման ավարտ:

Տվյալ դեպքում միջազգային առևտրի համար անհարկի խոչընդոտներ են ստեղծվում այն երկրներում գրանցված ապրանքների համար, որոնք չեն մտնում պատվիրատուի նախընտրած երկրների ցանկի մեջ, քանի որ պատվիրատուի նշած երկրներից կամ միություններից դուրս գտնվող երկրներում գրանցված ապրանքների արտադրողները չեն կարող մասնակցել տվյալ ընթացակարգին:

Միջազգային առևտրի համար անհարկի խոչընդոտների բացառումը նշանակում է, որ պատվիրատուն իրավունք չունի սահմանելու ֆիլտր ըստ երկրների, այսինքն իրավունք չունի տալ նախապատվություն ինչ որ երկրի կամ միությունների, փաստացի դրանով բարենպաստ դիրք ապահովելով այդ երկրներում գրանցված ապրանքների համար:

Նույն հոդվածի երրորդ կետի համաձայն, մեջբերում եմ.

<<3. Որոշակի ապրանքանիշի կամ առևտրային անվան, արտոնագրի, նախագծի կամ տեսակի, կոնկրետ ծագման, արտադրողի կամ մատակարարի վերաբերյալ պահանջ կամ հղում չի ներկայացվում՝ բացառությամբ, եթե չկա գնումների պահանջները ներկայացնելու բավականաչափ հստակ կամ դյուրըմբռնելի այլ ձև՝ պայմանով, որ մրցառքի փաստաթղթերում նշված լինեն «կամ համարժեք» բառերը:>> մեջբերման ավարտ:

Տվյալ դեպքում պատվիրատուն ունի հնարավորություն բավականաչափ հստակ և ըմբռնելի կերպով նկարագրել իր կարիքների համար անհրաժեշտ ապրանքների

բնութագրերը, սակայն ինչպես տեսնում ենք, պատվիրատուն դրա փոխարեն որոշել է իր հայեցողությամբ կատարել ապրանքների գտում ըստ դրանց գրանցման երկրի: Պատվիրատուն այս ամենը պատճառաբանում է որակյալ ապրանքներ ձեռք բերելու ցանկությամբ: Մենք էլ ենք կողմ, որպեսզի պատվիրատուն ձեռք բերի որակյալ ապրանքներ: Դա տրամաբանական և արդարացված պահանջ է, արդարացված նպատակ է, սակայն այդ նպատակին հասնելու համար պատվիրատուն ընտրել է սխալ գործիք, քանի որ որակյալ ապրանքներ գնելու համար պետք է գրագետ և մանրակրկիտ կազմել տվյալ ապրանքի տեխնիկական բնութագիր, այլ ոչ թե կատարել երկրների ֆիլտրում ըստ սեփական նախասիրությունների:

Հաջորդ պահանջը, որը մեր կողմից բողոքարկվել էր, հետևյալն է

«Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:»:

Փաստացի, պատվիրատուն մի կողմից պահանջում է արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության հավաստագիր, սակայն մյուս կողմից պարզ է դառնում, որ այդ պահանջն անիրագործելի է որևէ ընկերության համար:

Այժմ մանրակրկիտ կհիմնավորենք, թե ինչու է այդ պահանջը անիրագործելի և ինչպիսի ճնշող գործիք է հանդիսանում պատվիրատուի ձեռքում այդ կետը, մասնավորապես իր համար անցանկալի ընկերությունների կողմից մատակարարվելիք ապրանքների ընդունումը իր հայեցողությամբ մերժելու համար:

Հարկ է նշել, որ ապրանքն արտադրողը կամ վերջինիս ներկայացուցիչը իրավասու չեն տրամադրել համապատասխանության սերտիֆիկատ, քանի որ արտադրանքի համապատասխանության հավաստման համար արտադրողի կողմից տրվող փաստաթղթի անվանումը հայտարարագիր է: Որպես փաստարկ ցանկանում ենք մեջբերել ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ 2012թ փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն ՀՀ օրենքի Հոդված 2-ի 1 մասի 15 կետը, որտեղ հստակ գրված է, թե ինչպես է կոչվում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված փաստաթուղթը:

Մեջբերում.«15) համապատասխանության հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված փաստաթուղթ, որով արտադրողը (արտադրողի լիազոր ներկայացուցիչը, դիստրիբյուտորը)

հավաստում (փաստում) է արտադրանքի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին.».

Վերոնշյալից պարզ է դառնում, որ ապրանքի համապատասխանությունը փաստելու համար արտադրողի (արտադրողի լիազոր ներկայացուցչի, դիստրիբյուտորի) կողմից տրված փաստաթուղթը կոչվում է ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ, այլ ոչ թե սերտիֆիկատ

Այժմ ընթերցենք ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ 2012թ փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն ՀՀ օրենքի Հոդված 2-ի 1 մասի 16 կետը:

Մեջբերում. <<16) համապատասխանության սերտիֆիկատ՝ համապատասխանության գնահատման մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստում է (փաստում է) արտադրանքի, անձանց և կառավարման համակարգերի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգի և (կամ) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պահանջներին>> մեջբերման ավարտ:

Ինչպես տեսնում ենք համապատասխանության սերտիֆիկատը տրվում է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ կողմից, այլ ոչ թե արտադրողի կամ նրա ներկայացուցչի: Կից ներկայացված են համապատասխանության սերտիֆիկատների մի քանի նմուշներ, որոնց հետ ծանոթանալով կտեսնեք, որ այդ սերտիֆիկատների տրամադրողը արտադրողը չէ և չի էլ կարող լինել:

Համապատասխանության հավաստագիրը դա նույն *сертификат соответствия*-ն է, իսկ անգլերենում *Certificate of Conformity*: Դրանց թվով չորս նմուշներին կարող եք ծանոթանալ կից ներկայացված ֆայլերում: Այդ փաստաթղթերը ուսումնասիրելով կհամոզվեք, որ դրանք տրված են ոչ թե արտադրողի կողմից, ինչպես պահանջում է պատվիրատուն, այլ տրված են հավաստագրող մարմնի կողմից:

Հարգելի պարոն Օհանյան, եթե պատվիրատուն գտնում է, որ այդպիսի փաստաթուղթ գոյություն ունի, ապա խնդրում եմ Ձեր միջնորդությունը պատվիրատուին, ներկայացնելու այդպիսի փաստաթուղթ, մասնավորապես այնպիսի փաստաթուղթ, որը տրված կլինի հենց արտադրողի կողմից և կունենա համապատասխանության հավաստագիր անվանումը:

Այժմ ներկայացնենք, թե ինչպես կարող է պատվիրատուն օգտագործել վերոգրյալ հակասությունը՝ ցուցաբերելով խտրական մոտեցում տարբեր ընկերությունների նկատմամբ:

Տարբերակ 1:

Եթե ինչ-որ մատակարար որոշի ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ, ապա պատվիրատուն իսկույն կպնդի, որ տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել արտադրողի կողմից տրված սերտիֆիկատ, այլ ոչ թե հավաստագրող մարմնի կողմից տրված: Մենք արդեն վերևում ապացուցել ենք, որ սերտիֆիկատը տրվում է ոչ թե արտադրողի կողմից, այլ հավաստագրող մարմնի: Ահա և պատվիրատուն ստացավ այդ մատակարարի ապրանքի ընդունումը մերժելու հիմնավորում: Սա նշանակում է, որ պատվիրատուն կամայական կերպով կարող է իր համար անցանկալի մատակարարի ապրանքի ընդունումը մերժել, իսկ իր համար ցանկալի մատակարարի ապրանքը ընդունել, կարճ ասած կիրառել երկակի ստանդարտներ, ինչն անթույլատրելի է:

Տարբերակ 2

Եթե ինչ-որ մատակարար որոշի ներկայացնել համապատասխանության հայտարարագիր, ապա պատվիրատուն իսկույն կպնդի, որ տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել համապատասխանության հավաստագիր, այլ ոչ թե համապատասխանության հայտարարագիր:

Այստեղ ևս պատվիրատուն իր նախասիրություններից ելնելով, կարող է մերժել անցանկալի մատակարարի ապրանքի ընդունումը: Այսինքն գոյություն չունի մի այնպիսի մատակարար, ում ապրանքի ընդունումը պատվիրատուն իր հայեցողությամբ չկարողանա մերժել և պատճառաբանել, որ ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին: Ինչ սկզբից արդեն պատվիրատուի համար անցանկալի մատակարարը դատապարտված է անհաջողության, քանի որ ցանկացած սցենարի դեպքում պատվիրատուն ունի լծակ՝ սահմանված անիրագործելի պահանջ:

Ստացվում է իրավիճակ, երբ խաղի կանոնները պատվիրատուի կողմից ի սկզբանե սահմանված են այնպես, որ ապրանքների մատակարարման ժամանակ ինքն իր նախասիրությամբ է որոշում ում ապրանքն է համապատասխանում տեխնիկական բնութագրերին, իսկ ում ապրանքը՝ ոչ, մինչդեռ պարզ է, որ դա անթույլատրելի է, և պետք է ինչ սկզբից սահմանել այնպիսի կանոններ, որ պատվիրատուն չունենա ապօրինի լծակ այս կամ այն ընկերությանը ճնշելու, իսկ մյուսին արտոնություն տալու համար: Բողոքարկվող այս ընթացակարգում այդ սկզբունքը չի պահպանվել:

Հաջորդ պահանջը, որին ցանկանում ենք անդրադառնալ, դա CE Mark անվանումով փաստաթուղթ ներկայացնելու պահանջն է: Խնդիրը կայանում է նրանում, որ CE Mark անվանումով հավաստագիր գոյություն չունի: Պատվիրատուն հավանաբար նկատի է ունեցել, որ մատակարարվող ապրանքները պետք է ունենան CE մակնշում (հասպտումը

կազմվել է Conformance Européenne արտահայտությունից), սակայն իր պահանջի մեջ նշել է այնպիսի փաստաթուղթ, որը ոչ մի մատակարար չի կարող ներկայացնել, քանի որ Եվրոմիության երկրների տարածքում շրջանառության թույլտվություն ունեցող ապրանքների համար տրվող հավաստագրի անվանումը CE Mark չէ: Եթե պատվիրատուն կարող է այդպիսի անվանումով գեթ մեկ սերտիֆիկատ ներկայացնել, օրինակ նախորդ տարիների ընթացքում տարբեր մատակարարներից ապրանքների ընդունման ժամանակ պահանջված, ապա մենք այս մասով բողոքը չենք պնդի:

Հաջորդ վիճահարույց դրույթը հետևյալն է՝ «արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ)»:

Ինչպես նկատում ենք, փակագծերում նշված հավաստագրերը միմյանցից տարանջատված են ստորակետով, ինչը նշանակում է, որ պատվիրատուն պահանջում է և՛ ISO և՛ GMP հավաստագիր: Հարկ է նշել, որ GMP հավաստագիրը բժշկական պարագաների արտադրող ընկերություններին վերաբերելի չէ, քանի որ այն տրվում է դեղերի արտադրությամբ զբաղվող և սահմանված պահանջներին բավարարող արտադրողներին: Առաջին հայացքից կարող է թվալ, թե մեր ընկերությունը չափազանց բժախնդիր է և ստորակետի աստիճանի խախտումներ է գտնում տեխնիկական բնութագրում, սակայն երբ բողոք քննող անձը տեսնի, թե պատվիրատուն ինչպես է տասն անգամ ավելի բժախնդրությամբ փորձում մերժել մատակարարից ապրանքի ընդունումը՝ օգտագործելով տեխնիկական բնութագրում առկա երկակի մեկնաբանվող, վիճահարույց ու հակասական այն կետերը, որոնք մենք բողոքարկել ենք, ապա պարզ կդառնա, որ մեր քայլերը միտված են տեխնիկական բնութագրից բոլոր այն հակասական ու վիճելի կետերը նախապես հանելուն, որոնք պատվիրատուն հնարավոր է օգտագործի իր համար անցանկալի մատակարարների կողմից ստացված ապրանքը չընդունելու համար:

Բացի վերոգրյալից, ակնկալում ենք պատվիրատուից հետևյալ հարցի պատասխանը:

Սույն ընթացակարգով նախատեսված ապրանքների ընդունումը կատարվելու է ՀՀ պաշտպանության նախարարի 2019թ. փետրվարի 22-ի N177 հրամանի համաձայն, թե ոչ: Եթե ոչ, ապա ինչու: Խնդրում եմ տրամադրել հստակ հիմնավորում, թե ինչու այդ հրամանով չի կատարվելու սույն ընթացակարգով նախատեսված ապրանքների ընդունումը:»:

Ընկերություն 1-ը, 09.02.2021թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հավելել է հետևյալը.

«Պատվիրատուն իր առարկությունների տրամաբանությունը կառուցում է այն բանի վրա, որ իբր սահմանել է լայն հնարավորություններ՝ շուրջ 40 երկրում ապրանքների գրանցման հնարավորության վերաբերյալ և որպես հիմնավորում բերում է այն, որ ցանկացած ընկերություն կարող է իր ապրանքը գրանցել այդ երկրներում և ներմուծել ապրանք ու առաջարկել ՊՆ-ին: Հարց է ծագում, թե ինչու պետք է պտտենցիալ մատակարարները և իրենց գործընկեր արտադրողները գրանցեն իրենց ապրանքը պատվիրատուի նշած հենց այդ շուրջ 40 երկրում կամ միություններում: Ստացվում է, որ պատվիրատուն համարում է, որ ինքն իրավունք ունի ընտրել, թե որ երկրներում կամ միություններում գրանցված ապրանքներն են իր համար ընդունելի և սահմանել է երկրների ցանկ, որտեղ գրանցված ապրանքները ընդունելի են իր համար: Նույն տրամաբանությամբ, մեկ այլ պատվիրատու էլ կսահմանի այլ երկրների ցանկ, որն իր համար է ընդունելի և կպատճառաբանի որ այդ երկրների ապրանքներն է իր համար ընդունելի՝ նշելով, որ իր կարիքը կարող է բավարարվել միայն այդ երկրներում գրանցված ապրանքներով: Այստեղ հարց է ծագում, ո՞րն է ՊՆ և մյուս պատվիրատուների տարբերությունը, ինչու պետք է ՊՆ-ն իրավունք ունենա սահմանելու երկրների միությունների ցանկ, իսկ մեկ այլ պատվիրատու չի կարող այդպիսի իրավունք ունենալ:

Եթե տարբերությունը երկրների քանակի մեջ է, այսինքն ըստ ՊՆ-ի առարկությունների իր սահմանած երկրների քանակը 40 է (իրականում 33) և դա լայն մրցակցության հնարավորություն է տալիս, ապա մեկ այլ պատվիրատու էլ ընտրողաբար կսահմանի օրինակ 35 երկրների ցանկ: Բացի այդ, պատվիրատուի նկարագրած դեպքերը, օրինակ Շվեյցարիայից դեպի ԵՄ ապրանք արտահանելիս առկա ընթացակարգերի մասին, տեղին չեն, քանի որ մենք այստեղ չենք քննարկում թե ինչպես է Շվեյցարիայում գրանցված ապրանքը մուտք գործելու ԵՄ: Այս բողոքի քննության տեսանկյունից, բացարձակապես կարևոր չէ, թե ինչ ընթացակարգով է կատարվում Շվեյցարիայից ապրանքների արտահանումը դեպի ԵՄ, քանի որ ՀՀ-ն չի հանդիսանում ԵՄ անդամ, հետևաբար նաև ԵՄ դիրեկտիվներին հետևելու և դրանցով առաջնորդվելու պարտավորություն ՀՀ-ն չունի: ՊՆ-ի կողմից բերված օրինակները այն մասին, թե ինչպես է արտահանվում ապրանքը Շվեյցարիայից դեպի ԵՄ, բացարձակապես կիրառելի չեն ՀՀ համար և այս ընթացակարգի համար, քանի որ ԵՄ երկրներում ապրանքների շրջանառության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն ՀՀ ապրանք ներմուծելու համար:

Բացի այդ, ՊՆ-ն իր վերոնշյալ պահանջի հիմքում դնում է իբր որակյալ ապրանք գնելու անհրաժեշտությունը, սակայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության

<<Սպանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ կողմից ստացված գրության համաձայն, մեջբերում եմ <<CE սերտիֆիկատը հավաստում է Եվրոպական Միության դիրեկտիվներին համապատասխանության և այդ երկրներում ապրանքի շրջանառության թույլտվությունը և չի երաշխավորում ապրանքի որակը>>: Այստեղից հետևում է, որ ՊՆ պնդումները այն մասին, որ վերոնշյալ դրույթի նպատակը, որակյալ ապրանքներ ձեռք բերելն է, անհիմն է և չի համապատասխանում իրականությանը:

Այժմ անդրադառնանք ՊՆ հաջորդ առարկությանը:

Իր առարկության մեջ, ՊՆ-ն միտումնավոր կերպով աղավաղել է Վերիփաս ՍՊԸ պնդումները, ինչպես նաև ջանասիրաբար հերքել է այնպիսի բան, որը Վերիփաս ՍՊԸ-ն երբեք չի պնդել: Ելնելով անհրաժեշտությունից, ստորև կներկայացնենք մեր պնդումները և հիմնավորումները ավելի մանրակրկիտ:

Ծանոթություն բաժնում ՊՆ կողմից սահմանված պահանջը հետևյալն է

<<Ապրանքները պետք է ունենան.

- արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ),

- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր, որոնց պատճեններն անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի մատակարարման ժամանակ:

Խնդրում եմ ուշադիր կարդալ առաջին պահանջը և երկրորդ պահանջը, որպեսզի հասկանանք, թե ինչ փարբերություններ կան:

Առաջին պահանջում մասնավորապես գրված է. <<արտադրողին տրված>>, իսկ երկրորդ պահանջում՝ գրված է <<արտադրող կազմակերպության կողմից . . տրված>>: Այս համադրությունը ակնառու կերպով ցույց է տալիս, որ << ՊՆ ներկայացուցիչները գերազանց հասկանում են, թե որ դեպքում է հավաստագիրը տրվում արտադրողին, իսկ որ դեպքում արտադրողի կողմից:

Եթե իմաստային նույն բանը լիներ, ինչպես փորձում է ներկայացնել ՊՆ-ն, ապա պաշտպանության նախարարությունը հենց այդպես էլ նույնությամբ կձևակերպեր պահանջը, այսինքն կգրեր <<տվյալ ապրանքն արտադրողին տրված համապատասխանության հավաստագիր>>, սակայն պաշտպանության նախարարությունը այդպես չի գրել: Փաստացի ձևակերպումներից ակնհայտ է, որ պահանջները նույն կերպ շարադրված չեն և փարբերվում են, քանի որ փաստացի փարբեր պահանջներ են,

տարբերվող իմաստներ արտահայտող: Եթե մի պահ նույնիսկ ենթադրենք, որ ՀՀ ՊՆ-ն վերոնշյալ երկու պահանջներում նույն իմաստն է նկատի ունեցել, ապա այդ դեպքում անկողմնակալ դիտորդի մոտ վերոգրյալ ձևակերպումները առնվազը տարակերպ մեկնաբանության տեղիք են տալիս, ինչն անթույլատրելի է:

Հաջորդիվ ՊՆ-ն հայտնում է, որ մեջբերում եմ.

<<Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի ՀՀ կառավարության 4 մայիսի N 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությունը . . . , ծանոթություն բաժնի վերոհիշյալ կետը ձևակերպվել է տվյալ խմբագրությամբ>>: Այստեղ մի պահ կանգ առնենք ու մանրամասն վերլուծենք այդ տողը: Փաստացի ՊՆ-ն խոստովանում է, որ ինքը չի կրկնել կամ չի մեջբերել 2017 թվականի մայիսի 4-ի ՀՀ կառավարության 4 մայիսի N 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությունը, այլ ձևակերպել է այն իր խմբագրությամբ:

Մի կողմից ՊՆ-ն հայտնում է, որ վերոհիշյալ կետը ձևակերպվել է տվյալ խմբագրությամբ հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի ՀՀ կառավարության 4 մայիսի N 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությունը, սակայն մյուս կողմից երբ կարդում ենք այդ իբր հիմք ընդունված որոշման ա) ենթակետը, ապա տեսնում ենք, որ այդպիսի ձևակերպումներ այնտեղ չկան և ՊՆ կողմից սեփական նախաձեռնությամբ կատարված խմբագրական ձևակերպումները աղճատել են ողջ իմաստը:

Հաջորդիվ, ՊՆ-ն ևս մեկ անհեթեթ բացատրություն է ներկայացնում, թե որտեղից է վերցրել <<որակի հավաստագիր>> տերմինը:

Մեջբերում ՊՆ առարկությունից.

<<Պատվիրատուի կողմից պահանջված որակի հավաստագիրը ներառված է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթում, ըստ որի 2. Գնման առարկայի բնութագրերը՝ <<...Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, . . . որակին, ստանդարտին, անվտանգությանը, . . . ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: >>:

Ինչպես տեսնում ենք, <<որակի հավաստագիր>> անվանումով տերմին փաստացի ներառված չէ ՊՆ մեջբերած դրույթում: Այստեղ ՊՆ-ն պարզապես փորձել է գրնել գոնե մեկ բառ, մեկ համընկնում իր պահանջի հետ:

Իրականում ՊՆ ներկայացուցիչները օգտվել են ՀՀ կառավարության 2017թ. 4 մայիսի N 526-Ն որոշման 21-րդ կետի ուժը կորցրած դրույթից, որտեղ իրոք եղել է <<որակի սերտիֆիկատ>> բառակապակցությունը, սակայն այդ դրույթը նախ փոփոխվել է 08 փետրվարի 2018 թվականի N 104-Ն որոշմամբ և դարձել է <<համապատասխանության սերտիֆիկատ>>, իսկ դրանից հետո կատարվել է 21 կետի վերջին փոփոխությունը՝ 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշմամբ, որտեղ գրված է հետևյալը <<...իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցիչ երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:>>, այսինքն այս պահին ուժի մեջ գրնվող վերջնական որոշման մեջ արդեն բացակայում է <<որակի սերտիֆիկատ>> տերմինը և այն փոխարինված է <<համապատասխանության սերտիֆիկատ>> տերմինով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՊՆ ներկայացուցիչների կողմից ինչպես այս ընթացակարգի առարկությունում, այնպես էլ բողոքարկված այլ ընթացակարգերում բերվել են նույնաբովանդակ առարկություններ կամ պարզաբանումներ, որտեղ բազմիցս օգտագործել են խմբաքանակ բառը, ապա անհրաժեշտություն է ծագում մանրամասն անդրադառնալ այդ հարվածին ևս:

Այսպես, ըստ ՊՆ ներկայացուցիչների ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր պարզաբանումների, մեջբերում են.

<<Փաստաթղթում պետք է նշված լինեն խմբաքանակի (ների) համարը (ները), արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և տվյալ մատակարարվող ապրանքի խմբաքանակի որակը և անվտանգությունը հաստատելու նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները:>>: Սույն դիրքորոշումն ուղարկելու օրվա դրությամբ ՊՆ ներկայացուցիչները չեն ներկայացրել իրենց կողմից պահանջվող այդ փաստաթղթի նմուշ, օրինակ, որի անվանումը կլինի համապատասխանության սերտիֆիկատ և դրա մեջ նշված կլինեն խմբաքանակի համարները, արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և տվյալ մատակարարվող ապրանքի խմբաքանակի որակը և անվտանգությունը հաստատելու նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները:

Հարց է ծագում, թե ինչու ՊՆ-ն չի կարողանում ներկայացնել այդպիսի փաստաթուղթ: Պատասխանը հետևյալն է:

Համապատասխանության սերտիֆիկատի ձևը, ինչպես նաև դրանում ներառվող տեղեկությունների ցանկը հստակ սահմանված է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2 հոկտեմբերի 2017 թ . N 954-Ն հրամանով:

Ահա հրամանի անվանումը՝ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Սա նշանակում է, որ ՀՀ ՊՆ ներկայացուցիչները չեն կարող ինքնուրույն սահմանել, թե ինչ տեղեկություններ պետք է պարունակվեն համապատասխանության սերտիֆիկատում, հետևաբար նաև իրավասու չեն լրացուցիչ անհիմն պահանջներ առաջադրել ընթացակարգի մասնակիցներին այն մասին, թե ինչ տեղեկություններ պարունակվեն համապատասխանության սերտիֆիկատում:

Ընթերցելով այդ հրամանը կհամոզվենք, որ որևէ հատվածում գրված չէ, որ համապատասխանության սերտիֆիկատում պետք է նշված լինեն ՀՀ ՊՆ կողմից պահանջված խմբաքանակի համարները, արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և տվյալ մատակարարվող ապրանքի խմբաքանակի որակը և անվտանգությունը հաստատելու նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները:

Ընդհակառակը, վերոգրյալ ՀՐԱՄԱՆԻ Հավելված N 3-ի թիվ 8 կետում գրված է.

8. Արգելված է սերտիֆիկատում սույն կանոններով չնախատեսված տեղեկատվության ներառումը, բառերի կրճատումը (բացառությամբ համընդհանուր նշանակության և կրճատումների), ինչպես նաև սերտիֆիկատի տեքստի մեջ ցանկացած ուղղում կատարելը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ համապատասխանության սերտիֆիկատում ներառման ենթակա տեղեկություններին ՀՀ ՊՆ կողմից ներկայացվող պահանջները իրավաչափ չեն:

Հարգելի պարոն Օհանյան, սույն դիրքորոշումն ուղարկելու օրվա դրությամբ ՀՀ ՊՆ ներկայացուցիչները չեն ներկայացրել ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում տրված սերտիֆիկատ, որում միաժամանակ արտացոլված կլինեն ՊՆ պահանջած բոլոր հետևյալ

տեղեկությունները՝ խմբաքանակի համարները, արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և տվյալ մատակարարվող ապրանքի խմբաքանակի որակը և անվտանգությունը հաստատելու նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները: Այսինքն չեն ներկայացրել սերտիֆիկատ, որը հենց իրենք են պահանջում: Ստորև բերենք պարզ օրինակ:

Դիցուք, Վերիփաս ՍՊԸ-ն ունի ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում տրված համապատասխանության սերտիֆիկատ և ցանկանում է մասնակցել ՊՆ այս ընթացակարգին: Արդյոք կարող է Վերիփաս ՍՊԸ-ն մասնակցել այդ մրցույթին: Առաջին հայացքից կարող է թվալ թե այո, և նույն բանը կանդեն նաև պատվիրատուի ներկայացուցիչները, սակայն այդ հարցի պատասխանը միանշանակ ոչ է:

Վերիփաս ՍՊԸ-ն, ինչպես նաև այլ ընկերություններ, ովքեր ունեն միայն ԵԱՏՄ որևէ երկրում տրված համապատասխանության սերտիֆիկատ, չի կարող մասնակցել այս ընթացակարգին, քանի որ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում տրված սերտիֆիկատների մեջ չեն կարող ներառված լինել ՊՆ կողմից պահանջված խմբաքանակի համարները, արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և տվյալ մատակարարվող ապրանքի խմբաքանակի որակը և անվտանգությունը հաստատելու նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները:

Ոչ մի մատակարար չի կարող ներկայացնել ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում տրված համապատասխանության սերտիֆիկատ, որտեղ ներառված կլինեն ՊՆ պահանջած բոլոր վերոգրյալ տեղեկությունները: Սկսածվում է, որ մի կողմից ՀՀ ՊՆ-ն պահանջում է մասնավորապես ԵԱՏՄ սերտիֆիկատ, սակայն մյուս կողմից էլ պահանջում է, որ այդ սերտիֆիկատում ներառված լինեն խմբաքանակի համարները, արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և տվյալ մատակարարվող ապրանքի խմբաքանակի որակը և անվտանգությունը հաստատելու նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները, ինչն անհնարին է:

Եթե ՀՀ ՊՆ-ն համոզված է, որ այդ պահանջը իրագործելի է, այսինքն ԵԱՏՄ սերտիֆիկատում կարող են ներառված լինել իրենց կողմից պահանջված բոլոր տեղեկությունները միաժամանակ, ապա թող ներկայացնի գեթ մեկ այդպիսի ԵԱՏՄ գործող սերտիֆիկատ: Մեր համարել էլ է հետաքրքիր, թե այդ որ ընկերությունն է պատրաստ տուգանքներ ու տույժեր վճարելու՝ նախարարի հրամանին հակասող և ԵԱՏՄ միասնական սերտիֆիկատի ձևից ու բովանդակությունից շեղված սերտիֆիկատ փրամադրելու համար:

Հաջորդ տերմինը, որն օգտագործվում է ՊՆ կողմից, դա ՀԱՎԱՍՏԱԳԻՐ տերմինն է:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պահանջում է հավաստագիր, սակայն ՀՀ կառավարության որոշման մեջ գրված է սերտիֆիկատ: Ոլորտին քիչ թե շատ տեղյակ անձինք կփաստեն, որ հավաստագիր և սերտիֆիկատ տերմինները նույնն են, նույն իմաստն ունեն, սակայն քանի որ տվյալ դեպքում առկա է խիստ բարձր ռիսկ, որ ՀՀ ՊՆ ներկայացուցիչները ապրանքի ընդունման ժամանակ հերթական անգամ կարող են երկակի մեկնաբանել այդ տերմինը ի վնաս մատակարարի և չընդունել ապրանքը, ապա անհրաժեշտություն է առաջանում օգտագործել հենց <<սերտիֆիկատ>> տերմինը և դրանով բացառել ՀՀ ՊՆ որոշ պաշտոնյաների կողմից այդ դրույթով մանևրելու հնարավորությունը:»:

4. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 19.01.2022թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/2/923-2022 և 27.01.2022թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/1/1507-2022 գրություններով դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 18.01.2022թ.-ին և 26.01.2022թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 25.01.2022թ.-ի թիվ ՊՆ/02/340-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից 18.01.2022թ.-ին ներկայացված թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2022/07 բողոքը՝ հայտնում եմ հետևյալը.

«Խաչպար» ՍՊ ընկերությունը ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացրել էր բողոք՝ նշելով, որ գնման ընթացակարգի հրավերով հաստատված «Տեխնիկական բնութագիր» Հավելված N1-ի աղյուսակից հետո սահմանված պայմանների 1-ին ենթակետով գնման ենթակա բոլոր չափաբաժինների համար սահմանվել է «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ ճւսպոնիսյում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ)- Բացառություն

են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները» պահանջը, որը խտրական է, արգելք է հանդիսանում և բարդացնում է «Խաչպար» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքին,, հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային և խտրական հիմունքներով կազմակերպմանը:

«Խաչպար» ՍՊ ընկերության տնօրենի կողմից նշված դրույթները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ վերոհիշյալ պահանջը ենթադրում է զինծառայողներին, նրանց ընտանիքների անդամներին և ՀՀ ՋՈՒ այլ շահառուներին ախտորոշման, հիվանդությունների կանխարգելման, բժշկական օգնության ցուցաբերման և բուժումը իրականացնելիս կիրառել հնարավորինս որակյալ ապրանք:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում դեռ մշակված չեն ներմուծվող բժշկական նշանակության ապրանքների անվտանգության և որակի փորձաքննությունը, դրանք ՀՀ-ում գրանցելու և հավա ստելու գործընթացը, ուստի Ջինված ուժերի կարիքների համար ձեռք բերվող ապրանքների որակի և անվտանգության հավաստումը հնարավոր է սահմանել միայն վերոհիշյալ պահանջի առկայությամբ: Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ նշված երկրներում ապրանքների գրանցված լինելու պահանջը չի ենթադրում որևէ երկրում արտադրված ապրանքատեսակների սահմանափակում, և ցանկացած երկրի արտադրող արտաքին շուկայի համար նախատեսված, իր կողմից արտադրված ապրանքատեսակը կարող է գրանցել Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ ճապոնիայում՝ եթե այդ ապրանքատեսակն իր որակական չափանիշներով համապատասխանում է գրանցող երկրի կողմից սահմանված նորմերին:

Վերոհիշյալ պահանջը ոչ մի կերպ չի սահմանափակում մրցույթի մասնակցելու իրավունքը եթե մասնակիցը պատրաստ է առաջարկել՝ շուրջ 40 երկրներում որակի և անվտանգության ցուցանիշներով բազմատեսակ փորձաքննությունների արդյունքում շրջանառության թույլտվություն ունեցող բժշկական նշանակության ապրանքատեսակներ:

Թվարկված երկրներում իրենց ապրանքները կարող են գրանցել ցանկացած երկրի արտադրող, եթե ապահովում են տվյալ երկրների ստանդարտներին բավարարող որակական ցուցանիշները:

Հիմք ընդունելով վերոհիշյալը և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները (..գնման առարկայի բնութագրերը՝ պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման

նպատակով կատարվում է փվյալ գնումը.) հրավերի «Տեխնիկական բնութագիր» Հավելված 1-ով սահմանվել է «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները» պահանջը: Նշված պահանջը նպատակ ունի պարզաբանել ապահովել որակյալ և անվտանգ ապրանքներով, չի կարող համարվել խտրական, հավասար պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար և չի հանգեցնում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, քանի որ, ինչպես արդեն նշվել է, թվարկված երկրներում իրենց ապրանքները կարող է գրանցել ցանկացած երկրի արտադրող, եթե ապահովում է փվյալ երկրների ստանդարտներին բավարարող որակական ցուցանիշները: Հետևաբար վերոհիշյալ պահանջը չի հանգեցնում «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից նշված՝ «Գնումների մասին»

ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի խախտմանը (...Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը...);

Միաժամանակ նշեմ այն. փաստը, որ պահանջում նշված երկրներում բժշկական պարագաների գրանցումը պարտադիր է և հետևաբար, այդ երկրներում կիրառվող բժշկական նշանակության ապրանքատեսակները նույնպես անցնում են որակի և անվտանգության փորձաքննության):

Նշեմ նաև, որ «Խաչպար» ՍՊ ընկերությունը 2020-2021 թթ. ընթացքում նմանապիսի հայցադիմումներով դիմել ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որի որոշումներով ներկայացված դիմումները մերժվել են:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊ ընկերության՝ բողոքով ներկայացված պահանջը անհիմն է, իսկ բողոքը ենթակա է մերժման:»:

Պատվիրատուն, 01.02.2022թ.-ի թիվ ՊՆ/02/476-2022 գրությամբ ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Վերիպաս» ՍՊ ընկերության կողմից 26.01.2022թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/07 բողոքի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր բաժնում 1-ին կետով սահմանված է, որ «Ապրանքները» պետք է ունենան.

1. «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտագրված ապրանքները:»,

2. «Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից՝ փվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և(կամ) որակի հավաստագիր:»

- Ըստ բողոքը ներկայացրած ընկերության՝ վերոհիշյալ պահանջներից առաջինը սահմանափակում է միշարք արտադրողների, կազմակերպությունների մասնակցությունը փվյալ ընթացակարգին, քանի որ օրհնակ՝ Շվեյցարիայում, Հարավային Կորեայում կամ Կանադայում գրանցված ապրանքներ ունեցար ոչ մի ընկերության չի կարող մասնակցել փվյալ ընթացակարգին զուտ Պատվիրատուի կողմից կամայական չափանիշներով երկրները ֆիլտրելու անհիմն պահանջի հետևանքով խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3- րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթանստի և նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով ամրագրված պահանջները, որոնք վերաբերում են գնման գործընթացին ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնակցելու իրավահավասարությանը: Բողոքը ներկայացրած ընկերության այս պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարությունը չի սահմանափակել և ուրնահուրել ոչ մի ընկերության կամ հնարավոր մասնակցի՝ մրցույթին մասնակցելու իրավունքները հաշվի առնելով ներքոհիշյալ փաստարկները:

- Ցանկացած մատակարար ունի հնարավորություն ներկրելու մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքատեսակներ և հավասար պայմաններով մասնակցելու հրապարակված մրցույթին: (միաժամանակ, հրավերով չկա սահմանված որևէ դրույթ, որն արգելում է «Վերիպաս» ՍՊԸ-ին ներկրել և այլ ընկերությունների հետ միասին հավասար պայմաններով մասնակցել հայտարարված մրցույթին: «Գնումների մասին» ՀՀ օրենքի օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի և նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ի ենթակետի պահանջները վերաբերում են ոչ թե հրավերի տեխնիկական բնութագրերին (իսկ ապրանքների գրանցված լինելու պահանջը տեխնիկական բնութագրի մաս է), այլ գնումների գործընթացին հնարավոր մասնակիցների մասնակցելու իրավահավասարությանը, ինչը չի սահմանափակվել պատվիրատուի կողմից: Իսկ ինչ վերաբերում է գնման առարկայի

տեխնիկական բնութագրերին, ապա նշենք, որ այն չի կազմվել «զուտ Պատվիրատուի կողմից կամայական չափանիշներով երկրները ֆիտրելուանհիմն պահանջով», այլ հիմք է ընդունվել ՀՀ «Գումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջը (այն է. Գնման առարկայի բնութագրերը՝ ... 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.»): Պատվիրատուի կողմից հրավերում սահմանված վերոհիշյալ դռույթը չի ստեղծում հնարավոր մասնակիցների համար անհավասար պայմաններ, տեխնիկական բնութագրի պահանջները խտրական չեն և կարող են ընդգրկել ցանկացած երկրում առատորված և նշված երկրետում և միություններում գրանցված արտադրատեսակներ և ան հիրքն չեն, ռոտվիտուսուսկուտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով նախատեսված է կատարել է տվյալ գնումը: Դրանով հսկ նշված պահանջը չի հակասում ՀՀ օրենսդրությանը: Նշված պահանջի կիրառումը միայն սահմանափակում է անոռակ ապրանքատեսակների մատակարարումը, ռոռնք իրենց որականան հատկանիշներով չեն համապատասխանում շուրջ 40 երկրներում և միություններում գրանցման համառ անհրաժեշտ չափանիշներին, քանի որ դրանք անմիջականորեն առնչվում են մարդու առողջությանը: Վերոհիշյալ դռույթը ոչ մի կերպ արգեք չի հանդիսանում արտադրող երկրների և որևէ երկրում արտադրված բժշկական նշանակության ապրանքներ հ համար, ե՛թե տվյալ ապրանքները որակյալ են և համապատասխանում են նշված երկրներում և միություններում սահմանված նորմերին և նպատակ ունի զինծառայողների, նրուսնց ըն՛տանիքների անդամների և ՀՀ ՁՈՒ- այլ շահառուների ախտորոշման, հիվանդությունն երի կանխարգելման, բժշկական օգնության ցուցաբերման և բուժումը իրականացնելիս օգտագործել առավել որակյալ և անվրանգ ապրանքներ:

Ինչ վերաբերում է ընկերության՝ Կանադայում, Շվեյցարիայի կոնֆեդերացիայում և Հարավային Կորեայում գրանցման հավաստագրեր ունեցող բժշկական ապրանքատեսակներին վերաբերող հարցադրմանը, ապա հայտնում եմ, որ նշված երկրների բժշկական ապրանքների շրջանառությունը կարգավորող օրենսդրական ակտերն ունեն միայն ներքին կիրառման բնույթ և միջազգային համաձայնագրերով դեռ համապատասխանեցրած չեն: Այդ պատճառով հիշյալ երկրներից արտահանում կազմակերպելու համար բժշկական ապրանքները պետք է անցնեն միջազգային համաձայնագրերով ընդունված սերտիֆիկացում: Դրա վառ օրինակներն են Կանադայից ԱՄՆ ներկրման դեպքում պարտադիր FDA սերտիֆիկացումը, կամ Շվեյցարիայից

Եվրամիության փարածք բժշկական նշանակության ապրանքներ արտահանելիս այդ ապրանքների CE հավաստագրման պահանջը (համացանցի հղման օրինակ՝ <https://www.icqc.eu/ru/certifikacija-ce/soglashenie-o-vzaimnom-priznanii-ocenki-sootvetstviya> և https://ec.europa.eu/growth/single-market/goods/international-aspects-single-market/mutual-recognition-agreements_en):

Այսինքն, այս դրույթի կիրառումը լիովին համապատասխանում է ՀՀ «Գումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետին, «կամայական» չէ, «հենց Գերմանիայում կամ Աֆրիկայում գրանցված» լինելու անհիմն պահանջներ չի ներառում, հնարավորություն է տալիս ներկայացնել շուրջ 40 երկրներում գրանցված բժշկական նշանակության ապրանքներ և չի սահմանափակում կազմակերպությունների մասնակցությունը գնման գործընթացին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից ներկայարած երկրորդ պահանջին՝ «Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից՝ տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և(կամ) որակի հավաստագիր:», ապա այն չի հանդիսանում «անհիմն և անիրագործելի», իրավաչափ է, բխում է 2017թ. մայիսի 4-ի ՀՀ կառավարության 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությունից (այն է՝ ... իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:): Պատվիրատուի այս պահանջով հիմնավորվում է մատակարարված տվյալ ապրանքի համապատասխանությունը արտադրողի հայտարարագրված տեխնիկական չափանիշներին, դրա անվտանգությունը օգտագործողների համար և հավաստում է ապրանքի որակը: ՀՀ պաշտպանության նախարարությունը նշված պահանջով կնքված պայմանագրերով ապրանքները մատակարարներից ընդունում է առանց որևէ մատակարարի համար որևէ խոչընդոտ ստեղծելու, հիմք ընդունելով նրանց կողմից փրամադրված համապատասխանության և/կամ որակի հավաստագրերը՝ անկախ նրանից, թե ինչ ձևաչափերով են դրանք ներկայացվել (որակի հավաստագիր, որակի հայտարարագիր, փորձաքննության հավաստագիր կամ արտադրողի կողմից տրված երաշխիքային նամակ):

Վերոհիշյալ փաստաթղթերի նմուշների պատճենները բողոքը քննող անձին կտրամադրվեն լրացուցիչ:»:

Պատվիրատուն, 11.02.2022թ.-ին ներկայացրած լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Վերիպաս» ՍՊ ընկերության կողմից բողոքարկված՝ «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:» դրույթի մասով բողոքի լրացման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. «Վերիպաս» ՍՊԸ-ի կողմից պետական գնումների մասին Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ ՀՀ կողմից ստորագրված համաձայնագրի առաջին էջի 3-րդ պարբերության մեջբերմամբ հիմնավորած այն պնդումը, որ «փաստացի Պատվիրատուն խտրականություն է դրսևորում օտարերկրյա մատակարարների միջև, քանի որ այդ ընթացակարգին կարող են մասնակցել միայն այն երկրներում գրանցված արտադրողները, որոնք նշել է պատվիրատուն, դրանք են ԵԱՏՄ երկրները, ԱՄՆ և Ճապոնիա» չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Ծանոթություն» բաժնի դրույթի կիրառմամբ ցանկացած թե օտարերկրյա, թե ՀՀ ռեզիդենտ մատակարար կազմակերպություն կարող են մասնակցել հայտարարված մրցույթին՝ առաջարկելով ցանկացած երկրում արտադրված ապրանքատեսակներ, որոնք գրանցված են ոչ միայն ԵԱՏՄ երկրներում կամ ԱՄՆ-ում կամ Ճապոնիայում, ինչպես նշել է բողոքաբերը, այլ նաև Եվրամիության երկրներում: Եվ փաստացի, Պատվիրատուն խտրականություն չի դրսևորում ոչ միայն օտարերկրյա մատակարարների, այլ նաև արտադրող երկրների նկատմամբ:

2. Վերը նշված համաձայնագրի 6-րդ հոդվածը 1-ին կետի մեջբերմամբ հիմնավորված այն պնդումները, որ «Տվյալ դեպքում միջազգային առևտրի համար անհարկի խոչընդոտներ են ստեղծվում այն երկրներում գրանցված ապրանքների համար, որոնք չեն մտնում Պատվիրատուի նախընտրած երկրների ցանկի մեջ...» և «միջազգային առևտրի համար անհարկի խոչընդոտների բացառումը նշանակում է, որ Պատվիրատուն իրավունք չունի սահմանելու ֆիլտր ըստ երկրների...» անհիմն են, քանի որ նույն հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ «բնութագրերը պետք է հիմնված լինեն միջազգային չափանիշների վրա (դրանց առկայության դեպքում)...», իսկ մեր կողմից նշված երկրներում գրանցման ընթացակարգը նախատեսում է ապրանքների այդ երկրներում գրանցման համար անհրաժեշտ միջազգային չափանիշների համապատասխանություն:

3. Բողոքաբեր կազմակերպության կողմից նույն հոդվածի 3-րդ կետի մեջբերումով անտրամաբանական հիմնավորմամբ այն պնդումը, որ տվյալ դեպքում

«Պատվիրատուն ունի հնարավորություն բավականաչափ հստակ և ըմբռնելի կերպով նկարագրել իր կարիքների համար անհրաժեշտ ապրանքների բնութագրերը» և որ «...որակյալ ապրանք գնելու համար պետք է գրագետ և մանրակրկիտ կազմել տվյալ ապրանքի տեխնիկական բնութագիրը...» անհիմն են, քանի որ նույնիսկ մանրակրկիտ և ծավալուն բնութագիր սահմանելու դեպքում Հայաստանի Հանրապետությունում չկա հնարավորություն ապրանքների ընդունման ժամանակ իրականացնել դրանց փորձաքննությունը, որը կհավաստի մատակարարված ապրանքների համապատասխանությունը սահմանված տեխնիկական բնութագրին: Իսկ 2017թ. ՀՀ կառավարության 526-Ն որոշման 109-րդ հոդվածի համաձայն ապրանքները ընդունվում են մատակարարված ապրանքի՝ պայմանագրի պահանջներին համապատասխանելու դեպքում: Իսկ փորձաքննություն անցկացնելու անհնարինության դեպքում հիմք է ընդունվում այդ ապրանքների վերոհիշյալ երկրներում գրանցման՝ հետևաբար իրականացրած պատշաճ փորձաքննության փաստը:

«Վերիտաս» ՍՊ ընկերության կողմից բողոքարկված՝ «Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից՝ տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և(կամ) որակի հավաստագիր:» դրույթի մասով բողոքի լրացման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի մեջբերմամբ այն պնդումը, որ նշված պահանջը անհրաժեշտ է որևէ ընկերության համար անհիմն է, քանի որ նշված օրենքը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում և կարգավորում է հավաստագրող մարմինների գործունեությունը, իսկ ՀՀ-ից դուրս հավաստագրում անցած ապրանքները հավաստագրվել են այլ երկրներում գործող օրենսդրությամբ: Բացի դա, նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համապատասխանության գնահատման մարմինը նշանակվում է համակարգող մարմնի կողմից, ինչը չի բացառում, որ որպես համապատասխանության գնահատման մարմին կարող է նշանակվել արտադրող կազմակերպության արտադրանքի որակի վերահսկողություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը: Համոզված ենք, որ նմանատիպ մոտեցում կարող է կիրառվել այլ երկրների օրենսդրությամբ, ինչը նշանակում է, որ հենց արտադրողը կարող է իրականացնել իր արտադրանքի համապատասխանության հավաստագրում և տալ համապատասխանության և/կամ որակի հավաստագրեր (սերտիֆիկատներ): Ի ապացույց դրա կից ներկայացնում ենք նման հավաստագրերի օրինակներ: Ուստի, նշված դրույթը անհրաժեշտ է և մատակարար ընկերությունները կարող են ներկայացնել պահանջվող

փաստաթղթերը և ինչպես արդեն նշել էինք բոլոր դեպքերում մեզ մատակարարված ապրանքների հետ ներկայացվող հավաստագրերը մատակարար կազմակերպությունները ստացել են ապրանքի հետ՝ արտադրողից, անկախ այն փաստից, թե որ մարմինն է կազմել այդ հավաստագրերը:

2. Ինչ վերաբերում է բողոքների կողմից այն դիրքորոշմանը, որ համապատասխանության հավաստագրում չի նշվում ապրանքի խմբաքանակի վերաբերյալ տեղեկատվություն, ապա հենց բողոքների կողմից բողոքը քննող մարմնի միջոցով մեզ տրամադրված՝ ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի օրինակում առկա է խմբաքանակների վերաբերյալ տեղեկատվություն:

Բողոքների կողմից բողոքի լրացման մեջ Պատվիրատուի կողմից մատակարարված ապրանքների անհիմն մերժման հնարավոր տարբերակների վերաբերյալ տեղեկացնում ենք, որ բացառվում է պայմանագրով սահմանված փաստաթղթերի՝ համապատասխանության և/կամ որակի հավաստագրերի ներկայացման դեպքում որևէ մատակարարի կողմից մատակարարված ապրանքի ընդունումը մերժվի՝ անկախ այն հանգամանքից, թե ներկայացված հավաստագրերը կազմվել են արտադրողի թե այլ հավաստագրող մարմնի կողմից և որ մինչ օրս նման դեպք չի արձանագրվել:

Ինչ վերաբերում է բողոքների գրանցման հավաստագրեր ներկայացնելու պահանջներին, ապա մատակարարներին տրված է հնարավորություն ներկայացնելու պահանջված երկրներում գրանցման ցանկացած հավաստագիր:

Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ) դրույթի վերաբերյալ նշենք, որ այդ դրույթում թվարկվել են հնարավոր հավաստագրերի տարբերակները և ստորակետը չի նշանակում, որ պարտադիր պետք է ներկայացվի և ISO և GMP և «կամ այլ»: Հաշվի առնելով, որ լաբորատոր ազդանյութերի ցանկում առկա են նաև այնպիսի ապրանքատեսակներ, որոնք արտադրվում են դեղագործական ընկերությունների կողմից (օրինակ՝ հակաբիոտիկների նկատմամբ մանրէների զգայունության որոշման համար նախատեսված համապատասխան դեղանյութերով ներծծված սկավառակներ, տարբեր դեղանյութեր պարունակող այլ ազդանյութեր կամ պարագաներ) ներառվել է հնարավորություն ներկայացնելու նաև GMP հավաստագիր:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ «Վերիպաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքում և բողոքի լրացման մեջ բերված փաստարկները անհիմն են, Պատվիրատուն

հրավերում սահմանելով բողոքարկված դրոյթները գործել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով՝ իրեն տրված լիազորությունների շրջանակներում՝ չհակասելով նույն օրենքի մնացած դրոյթներին և այլ հրավական ակտերին:

Ձեր ուշադրությանն են ներկայացնում այն փաստերը որոնցով առաջնորդվել ենք մեր դիրքորոշումներում

1. Կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ գնման ընթացակարգով, կոնկրետ ապրանքատեսակների ձեռքբերման նպատակով, կոնկրետ գնահատող հանձնաժողովը հաստատում և հրապարակում է հրավեր, և այդ ընթացակարգը, հրավերը և գնահատող հանձնաժողովը որևէ կերպ չեն առնչվում այլ ժամանակահատվածում այլ ապրանքների ինչպես նաև այլ ընթացակարգերով նույն ապրանքների ձեռքբերման հետ: Այդ իսկ պատճառով հենց բողոքներ քննող անձնել յուրաքանչյուր ընթացակարգով իրակիանացնում է առանձին քննություն և ընդունում առանձին որոշում:

2. Հրավերի ներառված դրոյթները հանդիսանում են տեխնիկական բնութագրի բախկացուցիչ մաս (ապրանքի ամբողջական նկարագրություն) որի նկատմամբ պահանջները ներառված են օրենքի 13-րդ հոդվածում, ուստի օրենքի այլ հոդվածները որպես բողոքի հրավական հիմնավորում մեջբերելը համարում ենք անտեղի և կարծում ենք որ դա օրենքի սխալ մեկնաբանության արդյունք է:

3. Հրավերի տեխնիկական բնութագրում բողոքարկված դրոյթները ներառելիս ՊՆ-ն գործել է Օրենքի 13-րդ հոդվածով իրեն սահմանված իրավունքների շրջանակներում , չհակասելով Օրենքի որևէ դրոյթի պահանջներին, քանի որ ինչպես արդեն նշել ենք ցանկացած մատակարար կարող է ներկրել նշված պահանջներին համապատասխանող ապրանքատեսակներ և դրանց առաջարկով մասնակցել հայտարարված ընթացակարգերին: Չկա որևէ հրավական նորմ որը մենաշնորային դիրք է ապահովում գնման առարկա հանդիսացող որևէ ապրանքատեսակի համար:

4. Հնարավորինս որակյալ ապրանքներ ձեռքբերելու կամ ոչ պարզաճ որակի ապրանքները բացառելու նպատակով ներառված և բողոքարկված դրոյթում երկրների ցանկը կամայականորեն չի ընտրված, դրա հիմքում ընկած է այն պարզ տրամաբանությունը որ Հայաստանի Հանրապետությունը առողջապահական ոլորտին վերաբերվող հրավական ակտերում և միջպետական համաձայնագրերում վստահություն է ցուցաբերել նշված երկրների նկատմամբ սահմանելով որ օրինակ այդ երկրներում գրանցված դեղերը կարող են ՀՀ-ում գրանցվեն պարզեցված ընթացակարգով՝ առանց պարտադիր փորձաքննություն անցնելը, կամ որ պետական գնումների շրջանակում կարող են ձեռք բերվել ոչ միայն ՀՀ-

ում գրացված դեղեր, այլ նաև ՀՀ-ում չգրանցված դեղեր եթե դրանք գրանցված են նշված երկրներում, կամ որ ԵԱՏՄ համաձայնագրով սահմանվել է որ բժշկական նշանակության ապրանքները ունեն ազատ շրջանառության իրավունք ՀՀ-ում: Եվ հենց այդ պրամաբանությամբ էլ ընտրվել է երկրների ցանկը:

5. Ներկայացված պատվիրատուի կողմից կամայականորեն մատակարարներից ապրենքների ընդունումը մերժելու տարբերակները անտեղի են, դեռևս չի արձանագրվել նման գոնե մեկ դեպք: Բացի այդ հենց այդ նպատակով կառավարության 526 որոշմամբ սահմանվել է պայմանագրի կատարման փուլում հանրային հսկողության հնարավորությունը, միաժամանակ սահմանելով այդ իրավունքից զրկվելու պայմանները:

6. Բողոքաբերի այն պնդումը որ հրավերում նշված են այնպիսի փաստաթղթեր որոնք գոյություն չունեն էական չեն քանի որ բոլոր դեպքերում նշված են նաև այնպիսի փաստաթղթեր որոնք գոյություն ունեն: Օրինակ պահանջված երկրներում գնարցման հավաստագրերի վերաբերյալ դրույթում նշված CE Mark կամ այլ արտահայտությունը հնարավորություն է տալիս մատակարարներին ներկայացնելու ցանկացած գոյություն ունեցող փաստաթուղթ:»:

Պատվիրատուն, 11.02.2022թ.-ին ներկայացրած մեկ այլ լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Վերիփաս» ՍՊ ընկերության կողմից բողոքի դիրքորոշմանն ի պատասխան հայտնում են, որ

1. Պատվիրատուն՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի, որն է՝ «պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.» և Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տեղամիտարանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվադեֆինիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:» իրեն տրված լիազորությունների շրջանակներում սահմանել է

ապրանքների այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք չեն հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին՝ «Գնման առարկայի բնութագրերին»:

Հրավերով սահմանված դրույթում ներառված երկրների ցանկը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկրներում գրանցված լինելու համար ապրանքները պետք է բավարարեն այն միջազգային ստանդարտներին և անվտանգության չափանիշներին ներկայացվող պահանջներին, որոնք ընդունելի են Պատվիրատուի համար, միաժամանակ հաշվի է առնվել նաև այն փաստը, որ այդ երկրներում գրանցմանը նախորդում է ապրանքների պարզաճ փորձաքննությունը (որակի ստուգումը), որը Պատվիրատուն ինքնուրույն իրականացնելու հնարավորություն չունի: Իսկ ցանկացած երկրում՝ ներառյալ «Վերիփաս» ՍՊԸ կողմից մատնանշված Շվեյցարիայում արտադրված ցանկացած ապրանքատեսակ՝ չնայած այդ երկրում անցած որակի փորձաքննության, այլ երկրներ արտահանելիս պարտադիր պետք է ունենա միջազգային սերտիֆիկացում:

Մենք շարունակում ենք պնդել, որ նշված դրույթի ներառման հիմքում ընկած է որակյալ ապրանքներ գնելու անհրաժեշտությունը, կամ հնարավոր անորակ ապրանքատեսակների մատակարարման կանխումը: Ինչի ապահովման համար տեխնիկական բնութագրի «Ծանոթությունում» սահմանված է 3 դրույթ, որոնցից առաջինը՝ երաշխավորում է պարզաճ արտադրողից, երկրորդը՝ Պատվիրատուի համար ընդունելի միջազգային ստանդարտներին և անվտանգության չափանիշներին համապատասխան ապրանքատեսակի և երրորդը՝ սահմանված չափանիշներին համապատասխան արտադրված ապրանքի ձեռք բերումը:

Այսինքն, Պատվիրատուն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով իրավասու է տեխնիկական բնութագրում ներառել «ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը», որն ընդունելի է իր համար:

2. Ինչ վերաբերում է արտադրող կազմակերպության կողմից իր ապրանքի հետ համապատասխանության հավաստագրի ներկայացման անհնարինությանը, ապա նշենք, որ «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված է, թե ով ունի իրավասություն կազմելու նշված հավաստագիրը և չենք կարծում, որ մատակարարների կողմից կարող է տարաբնույթ մեկնաբանվել սահմանված դրույթը:

Նաև նույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված է, որ արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը կամ, դրանց բացակայության դեպքում, արտադրանք շուկայահանող տնտեսական գործունեության սուբյեկտը պարտավոր է պահպանել համապատասխանության հայտարարագիրը և (կամ) համապատասխանության սերտիֆիկատը, տեխնիկական կանոնակարգերին համապատասխանությունը հավաստող այլ տեխնիկական փաստաթղթերը արտադրանքի շուկայահանման ողջ ընթացքում:

Ելնելով վերոգրյալից, ակնհայտ է, որ համապատասխանության սերտիֆիկատը մատակարար կազմակերպությունը ապրանքի հետ ստանում է հենց արտադրողից կամ նրա պաշտոնական ներկայացուցիչից և ոչ թե հավաստագրող կազմակերպությունից:

Բողոքաբերի այն պնդումը, որ Պարվիրատուի ներկայացուցիչները կարող են երկակի մեկնաբանել «Հավաստագիր» և «Սերտիֆիկատ» տերմինները չի համապատասխանում իրականությանը, քանի որ մեզ քաջ հայտնի է, որ «հավաստագիր» բառը հանդիսանում է «սերտիֆիկատ» բառի հայերեն թարգմանություն և որ ինչպես նշել է Բողոքաբերը «հավաստագիր» և «սերտիֆիկատ» տերմինները նույնն են:

3. Լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռք բերման նպատակով հրապարակված սույն ընթացակարգի հրավերում մատակարարված ապրանքի հետ հենց համապատասխանության հավաստագրի ներկայացման մեր կողմից ներառված պահանջը չի հակասում ՀՀ օրենսդրությանը, քանի որ հիմնված է 2017թ. ՀՀ կառավարության 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության վրա և ինչպես արդեն նշել ենք այդ փաստաթուղթը առկա է նաև «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4 կետի 3-րդ ենթակետում նշված՝ շուկայահանման ընթացքում արտադրանքը ուղեկցող փաստաթղթերի ցանկում:

Ինչ վերաբերում է մեր կողմից հրապարակված հրավերում՝ 2017թ. ՀՀ կառավարության 526-Ն որոշման նախկին խմբագրության հիման վրա «որակի հավաստագրի» առկայությանը, գտնում ենք որ մատակարարված ապրանքի հետ որակի հավաստագրի ներկայացման ընձեռված հնարավորությունը չի սահմանափակում այլ ընդլայնում է մատակարար կազմակերպությունների կողմից ապրանքների հետ ներկայացվող փաստաթղթերի ներկայացման հնարավորությունը, որի ընձեռումը պարտավորեցնում է Պարվիրատուին տվյալ ընթացակարգերի շրջանակներում պայմանագրերով ապրանքների մատակարարման ժամանակ ընդունել նաև որակի հավաստագիրը:

Այսինքն, հրավերում՝ համապատասխանության և/կամ որակի հավաստագիր արտահայտությունը ներառելուց հետո ՀՀ Պաշտպանության նախարարությունը պարտավորվել է մատակարարվող ապրանքի հետ նշված փաստաթղթերից որևէ մեկի ներկայացման դեպքում առանց խոչընդոտների ընդունել մատակարարված ապրանքատեսակները, եթե դրանք համապատասխանում են պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի մնացած չափանիշներին և մատակարարվել են պայմանագրով սահմանված ժամկետներում:

Ուստի գտնում ենք, որ կնքված պայմանագրերով սահմանված և ապրանքի հետ ներկայացված համապատասխանության և/կամ որակի հավաստագրերից որևէ մեկի ներկայացումը չի կարող «կամայականորեն» անընդունելի լինել Պատվիրատուի համար:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ.

- Մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում մեր կողմից նշված երկրներում ապրանքատեսակների գրանցված լինելու փաստը պահանջող դրույթի ներառումը հիմնված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով և Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով Պատվիրատուին տրված իրավունքի վրա և այդ դրույթը ներառելով Պատվիրատուն գործել է օրենսդրությամբ իրեն տրված լիազորությունների շրջանակում՝ ձգտելով իր պահանջի բավարարմանը համապատասխան հնարավորիս որակյալ ապրանքների ձեռքբերմանը:

- Մատակարարված ապրանքի հետ համապատասխանության և/կամ որակի հավաստագրի ներկայացման դրույթը իրավական ուժ ունեցող պայմանագրում ներառված լինելու դեպքում՝ նշված փաստաթղթերի ներկայացման ժամանակ Պատվիրատուի կողմից չի կարող դառնալ կամայականության դրսևորման առարկա:

Ձեր ուշադրությանն են ներկայացնում այն փաստերը, որոնցով առաջնորդվել ենք մեր դիրքորոշումներում

1. Կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ գնման ընթացակարգով, կոնկրետ ապրանքատեսակների ձեռքբերման նպատակով, կոնկրետ գնահատող հանձնաժողովը հաստատում և հրապարակում է հրավեր, և այդ ընթացակարգը, հրավերը և գնահատող հանձնաժողովը որևէ կերպ չեն առնչվում այլ ժամանակահատվածում այլ ապրանքների ինչպես նաև այլ ընթացակարգերով նույն ապրանքների ձեռքբերման հետ: Այդ իսկ պատճառով հենց բողոքներ քննող անձնել յուրաքանչյուր ընթացակարգով իրակիանացնում է առանձին քննություն և ընդունում առանձին որոշում:

2. Հրավերի ներառված դրույթները հանդիսանում են տեխնիկական բնութագրի բախկացուցիչ մաս (ապրանքի ամբողջական նկարագրություն) որի նկատմամբ պահանջները ներառված են օրենքի 13-րդ հոդվածում, ուստի օրենքի այլ հոդվածները որպես բողոքի իրավական հիմնավորում մեջբերելը համարում ենք անտեղի և կարծում ենք որ դա օրենքի սխալ մեկնաբանության արդյունք է:

3. Հրավերի տեխնիկական բնութագրում բողոքարկված դրույթները ներառելիս ՊՆ-ն գործել է Օրենքի 13-րդ հոդվածով իրեն սահմանված իրավունքների շրջանակներում, չհակասելով Օրենքի որըէ դրույթի պահանջներին, քանի որ ինչպես արդեն նշել ենք ցանկացած մատակարար կարող է ներկրել նշված պահանջներին համապատասխանող ապրանքատեսակներ և դրանց առաջարկով մասնակցել հայտարարված ընթացակարգերին: Չկա որըէ իրավական նորմ որը մենաշնորային դիրք է ապահովում գնման առարկա հանդիսացող որևէ ապրանքատեսակի համար:

4. Հնարավորինս որակյալ ապրանքներ ձեռքբերելու կամ ոչ պատշաճ որակի ապրանքները բացառելու նպատակով ներառված և բողոքարկված դրույթում երկրների ցանկը կամայականորեն չի ընտրված, դրա հիմքում ընկած է այն պարզ տրամաբանությունը որ Հայաստանի Հանրապետությունը առողջապահական ոլորտին վերաբերվող իրավական ակտերում և միջպետական համաձայնագրերում վստահություն է ցուցաբերել նշված երկրների նկատմամբ սահմանելով որ օրինակ այդ երկրներում գրանցված դեղերը կարող են ՀՀ-ում գրանցվեն պարզեցված ընթացակարգով՝ առանց պարտադիր փորձաքննություն անցնելը, կամ որ պետական գնումների շրջանակում կարող են ձեռք բերվել ոչ միայն ՀՀ-ում գրանցված դեղեր, այլ նաև ՀՀ-ում չգրանցված դեղեր եթե դրանք գրանցված են նշված երկրներում, կամ որ ԵԱՏՄ համաձայնագրով սահմանվել է որ բժշկական նշանակության ապրանքները ունեն ազատ շրջանառության իրավունք ՀՀ-ում: Եվ հենց այդ տրամաբանությամբ էլ ընտրվել է երկրների ցանկը:

5. Ներկայացված պատվիրատուի կողմից կամայականորեն մատակարարներից ապրենքների ընդունումը մերժելու տարբերակները անտեղի են, դեռևս չի արձանագրվել նման գոնե մեկ դեպք: Բացի այդ հենց այդ նպատակով կառավարության 526 որոշմամբ սահմանվել է պայմանագրի կատարման փուլում հանրային հսկողության հնարավորությունը, միաժամանակ սահմանելով այդ իրավունքից զրկվելու պայմանները:

6. Բողոքաբերի այն պնդումը որ հրավերում նշված են այնպիսի փաստաթղթեր որոնք գոյություն չունեն էական չեն քանի որ բոլոր դեպքերում նշված են նաև այնպիսի փաստաթղթեր որոնք գոյություն ունեն: Օրինակ պահանջված երկրներում գնարցման

հավաստագրերի վերաբերյալ դրույթում նշված CE Mark կամ այլ արտահայտությունը հնարավորություն է տալիս մատակարարներին ներկայացնելու ցանկացած գոյություն ունեցող փաստաթուղթ:»:

5. ԳԲԲԱ-LO-2022-07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով 12.01.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) բացի այլ պայմաններից սահմանվել է, որ ապրանքները պետք է ունենան՝

- Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 18.01.2022թ.-ին ներկայացված բողոքը և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 26.01.2022թ.-ին ներկայացված համանման բողոքն հիմնավոր են և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Ձարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան

հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով 12.01.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքները պետք է ունենան՝

- Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր,

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված

հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու գրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Ջարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախադրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար

նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված «ապրանքները պետք է ունենան Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» պայմանը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը այդ մասով կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ և 22-րդ կետերի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա այն պայմանը, որ ապրանքները պետք է ունենան Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները), չի խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ուսումնասիրելով «Վերիտաս» ՍՊԸ-ի համանման բողոքը, ներկայացված բողոքի լրացումներն ու դիրքորոշումները, դրանցում առկա իրավական ու փաստական հանգամանքները, համադրելով Պատվիրատուի կողմից ներկայացված գրությունների փաստարկներին՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված «ապրանքները պետք է ունենան արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր» պայմանը չի համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ կետի դրույթներին:

Նախ՝ Հրավերով սահմանված նման ձևակերպումը տարակերպ մեկնաբանման տեղ է տալիս, և երկրորդ՝ այն հակասում է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա»

պարբերությամբ սահմանված դրույթի բովանդակությանը, որում հստակ սահմանվել է, որ «... գնման հայտը, որը ներառում է ... Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը»:

Վերոնշյալներով պայմանավորված, ինչպես նաև բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը՝ «ապրանքները պետք է ունենան արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր» պայմանի մասով չեն համապատասխանում Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթին, որպիսի պայմաններում հանգեցնում են Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմանը, քանի որ իր բովանդակության (տարակերպ ձևակերպմամբ) չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 26.01.2022թ.-ին ներկայացված համանման բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ «ապրանքները պետք է ունենան արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր» պայմանի մասով հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 21-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳԿԱՊԶԲ-22-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն ենթակա է չկայացած հայտարարման:

Ուստի, վերը բերված եզրահանգումների ու դատողությունների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 26.01.2022թ.-ին

ներկայացված համանման բողոքը պետք է բավարարել և պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, որպիսի պայմաններում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը նույնպես ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 18.01.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022-07 ծածկագրով բողոքը և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 26.01.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝



ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ